



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱՅԼ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ

18

Նոյեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայություն, սփյուռք և մի քանի այլ հասկացությունների շուրջ	3
Մոդեստ Կոլերովի պաշտոնանկությունը. պատճառները և հնարավոր հետևանքները (ծառայողական)	5
Ամերիկա-ռուսական մեծ առևտուր. իրավիճակային վերլուծություն	8
Народы без государства. коллекция фактов	12
«Вакуумное» сдерживание в этнополитических конфликтах	19
Есть ли выход из тупика в Карабахе?	23
Պայքար անդրկասպյան գազամուղի կառուցման համար	30
Վրաստանի Ազգային անվտանգության խորհուրդը	33
Использование частных армий в конфликтах	39

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, ՄՓՅՈՒՌՔ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Մեր ազգային առանձնահատկություններից մեկն այն է, որ հայության մոտ երկու երրորդը բնակվում է ՀՀ սահմաններից դուրս: Թերևս անվիճելի է, որ համաշխարհային հայության առկայությունը մեր լրջագույն ռեսուրսն է: Մինևույն ժամանակ, ազգի նման կարգավիճակը ենթադրում է բազմաթիվ ներքին և արտաքին մարտահրավերներ, որոնց համարժեք պատասխաններ չտալը կարող է հանգեցնել դրամատիկ և ոչ նպաստավոր զարգացումների: Այդ մարտահրավերների էության բացահայտումը և դրանց հակազդեցության մեխանիզմների մշակումը հայության ամենահրատապ խնդիրներից են: Իր հերթին՝ մարտավարությունը և ռազմավարությունն այդ ոլորտում կարող է արդյունավետ լինել միայն ունեցած ազգային ռեսուրսներին տիրապետելու պարագայում: Մինչդեռ տպավորությունն այնպիսին է, որ ներկայումս մեր ազգային ընտրանին դեռևս լիարժեքորեն չի տիրապետում նման կարգի համազգային խնդիրները լուծելուն անհրաժեշտ քաղաքական և հասարակագիտական գիտելիքներին և տեխնոլոգիաներին:

Վերոնշյալի առիթով նկատենք, որ ամենատարբեր երկրներում գտնվող հայկական համայնքները բազմադարյա պատմություն ունեն, սակայն այդ համայնքների ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում նկարագրական-պատմագրական ժանրում: Նման մոտեցման արժեքն, իհարկե, պետք է բարձր գնահատել. մասնավորապես՝ որ հայկական համայնքների պատմությունն, ընդհանուր առմամբ, հայոց պատմության կարևոր բաղադրիչներից մեկն է: Հարկ է խոստովանել, սակայն, որ իրագործվել են ընդամենը սահմանափակ թվով հետազոտություններ հայրենիքից դուրս գտնվող հայության գործունեության ընդհանուր կամ մասնակի (հաշվի առնելով նրանց բնակության երկրի առանձնահատկությունները և այլ գործոններ) օրինաչափությունների դրսևորումների բացահայտման վերաբերյալ: Չի դրվել նաև տեսական և կիրառական բնույթի որոշակի լուծումների մշակման խնդիրը, որոնք թույլ կտային բարձրացնել հայկական համայնքների գործունակությունն ու արդյունավետությունը Հայաստանի և հայության համազգային շահերի համատեքստում: Նման մշակումների բացակայությունը, ինչպես ցույց է տալիս հայկական համայնքների պատմությունը, բացասական դեր է խաղացել անցյալում: Մինևույն ժամանակ, կոնցեպտուալ մոտեցումներն այդ ոլորտում առանձնապես մեծ պահանջարկ ունեն այսօր: Ելնելով գլոբալ զարգացումների ներկա միտումներից՝ հայկական համայնքների նկատմամբ հայեցակարգված մոտեցումներ չկիրառելու պարագայում համազգային ռազմավարությունների մշակումը և իրականացումը, թերևս, անհնար կլինի:

Նոր մոտեցումների մշակումը ենթադրում է նաև որոշակի ճշգրտումներ և հստակեցումներ ընդունված և կիրառվող հասկացություններում և տերմինաբանությունում: Մասնավորապես, մեր Երրորդ հանրապետության ինքնիշխան կարգավիճակը և գլոբալացման գործընթացներն արդիական են դարձնում Մփյուռք հասկացությունն ավելի լայն և տարողունակ հասկացությամբ, ինչպիսին է Հայությունը, փոխարինելու հարցը: Հօգուտ սրա է վկայում թեկուզ այն փաստը, որ հանրապետության տարածքից դուրս, բայց իրենց պատմական հայրենիքում ապրում են մեր բազմաթիվ հայրենակիցներ (ըստ որոշ գնահատականների՝ նվազագույնը ոչ պակաս, քան 1 մլն), և դա վերաբերում է ոչ միայն Արևմտյան Հայաստանի այլալեզու, այլադավան հայերին, այլև, օրինակ, Ջավախքի հայությանը: Մեր այս հայրենակիցներին «սփյուռքահայերի» կամ «արտասահմանում ապրող հայերի» շարքին դասելը, իհարկե, անհարիր է:

Հավանաբար, վերիմաստավորման կարիք ունեն նաև մի քանի այլ կադապարներ ևս, որոնք այսօր տեղ ունեն մեր բառապաշարում և հետևաբար՝ մտածողությունում: Օրինակ, սովորական է դարձել յուրաքանչյուր պատեհ (երբեմն նաև բոլորովին անպատեհ) առիթով խոսել Հայրենիք-Մփյուռք փոխհարաբերությունների ամրապնդման մասին: Իհարկե, նման

ձևակերպումն անվիճելի, որոշ իմաստով՝ նույնիսկ «ծեծված» (տրիվիալ) ճշմարտություն է. Հայաստանն առանցքային հասկացություն է ամբողջ հայության համար, և առանց Հայրենիքի գաղափարի, ավելին՝ առանց Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնման գաղափարի, կենսունակ համազգային հայեցակարգի ձևավորումը սկզբունքորեն անհնար է: Սակայն Հայրենիք-Մփյուռք կապերի ամրապնդման մասին կոչն այսօր ինչ-որ չափով դեկլարատիվ է. այդ հարաբերությունների էությունը ճշգրտման և լրացման կարիք ունի: Բոլոր դեպքերում, պետք է ընդունել, որ դրանք որակապես տարբերվում են խորհրդային իշխանության տարիներին առկա հարաբերություններից: Անհրաժեշտ է փաստել նաև, որ այդ պնդումը ենթադրում է միայն երկկողմանի, այսինքն՝ արտասահմանյան համայնքների ու Հայաստանի փոխհարաբերությունների ամրապնդում: Այնինչ, Հայություն հասկացությունը և արդի աշխարհակարգը կարծես թե թելադրում են ավելի բարձր համակարգային մակարդակի փոխհարաբերություններ, այն է՝ հարաբերություններ *բոլորը բոլորի հետ* սկզբունքով: Նման բարձր կազմակերպվածություն ենթադրող համակարգում անհրաժեշտ է փոխգործակցություն ոչ միայն համայնքի և Հայրենիքի, այլև առանձին համայնքների միջև նույնպես: Փոխգործակցության նման բարդացված մեխանիզմը, ամենայն հավանականությամբ, թելադրում է նաև հարաբերությունների ամբողջության առավել հայեցակարգված և տեղեկատվական առումով հագեցած բովանդակություն: Այլ խոսքով՝ ավանդական հարաբերություններին (օրինակ՝ հումանիտար-տնտեսական ոլորտում) հարկ է հավելել որոշակի կոնցեպտներ, որոնք կներգրավեն հայությանը գլոբալ ազգային նախագծերի իրականացման գործում:

Հայության հիմնախնդիրների ցանկը, որոնք լուծված չեն նույնիսկ տեսական մակարդակում, կարելի է ընդլայնել: Նշենք թեկուզ ոչ մեկի կողմից լրջորեն չուսումնասիրված՝ հայկական համայնքների կյանքում որոշ ավանդական ինստիտուտների (օրինակ՝ հայ քաղաքական կուսակցությունների) ունեցած դերի նվազման գործընթացը և նոր հասարակական կազմակերպությունների ազդեցության աճը: Չափազանց կարևոր է նաև այն կառույցների կազմակերպական սխեմաների հարցը, որոնք պետք է զբաղվեն Հայության հիմնախնդիրներով: Մեկ այլ հիմնարար խնդիր է, այսպես կոչված, ինտեգրման և ինքնության պահպանման հարցադրումի ներկայացումը իրարարամերժության համատեքստում: Մինչդեռ, կարծես թե ակնհայտ է, որ նման մոտեցումների հակադրումն անարդյունավետ է, և ինքնատիպության պահպանումը ենթադրում է ոչ թե գետնայական հոգեբանություն, այլ ձգտում օտար հանրությանն ինտեգրվելով դուրս գալ դեպի համահայկական մակարդակ:

Վերոնշյալ նկատառումների համատեքստում հարկ է նշել, որ վերջին գիտական կոնֆերանսը՝ նվիրված Հայության հիմնախնդիրներին, տեղի է ունեցել 1987թ.: Այնինչ, առանց փորձագետների հանրության մասնակցության և հասարակական լայն քննարկումների՝ այդ հիմնախնդիրները չեն լուծվի: Այս տարի Երևանում անցկացված գիտագործնական կոնֆերանսը կոչված էր ինչ-որ կերպ կոտրելու, այսպես կոչված, անցումային փուլով պայմանավորված իներցիան և հայկական համայնքների հարցերի վերաբերյալ «սենյակային» բանավեճերն ու քննարկումները տեղափոխել ավելի պրոֆեսիոնալ, և որ գլխավորն է՝ պետական մակարդակ:

Գագիկ Տեր-Հարությունյան

ՄՈՂԵՍՏ ԿՈԼԵՐՈՎԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ս.թ. հոկտեմբերի 23-ին Վ.Պուտինի հրամանով ՌԴ նախագահի աշխատակազմի արտասահմանյան երկրների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչության ղեկավար Մոդեստ Կոլերովն ազատվեց զբաղեցրած պաշտոնից: Վերջինիս պաշտոնանկությունը երկակի նշանակություն ունի: Առաջին՝ Կոլերովի աշխատանքների արդյունքները բավարար չեն, և այս փաստը կարելի է համարել նրա հեռացման հիմնական պատճառը: Երկրորդ՝ ներկա փուլում բավական արագ սկսել է վերիմաստավորվել հետխորհրդային տարածքում ՌԴ քաղաքականությունը, որի իրականացման համար անհրաժեշտ են ավելի թարմ և մասնագիտացված ուժեր:

Ստորև ներկայացված վերլուծությունում տեղ գտած որոշ փաստեր ստացվել են «Նորավանք» ԳԿՀ՝ ՌԴ վերլուծական և այլ շրջանակների հետ կապերի արդյունքում:

Մոդեստ Կոլերովի պաշտոնանկությանը տրվեց «այլ աշխատանքի անցնելու պատճառով» պաշտոնական մեկնաբանությունը: Սակայն ռուսական «Կոմերսանտ» թերթը, հենվելով ՌԴ նախագահի աշխատակազմում ունեցած իր վստահելի աղբյուրների վրա, Կոլերովի հեռացումը բացատրեց վերջինիս «խիստ ծայրահեղ հայացքներով», որոնց արդյունքում բավական վատացել էին ՌԴ հարաբերություններն Ուկրաինայի, Էստոնիայի և Վրաստանի հետ: «Կոմերսանտի» վարկածի օգտին է խոսում այն, որ աշխատանքից հեռացվելուց հետո Մ.Կոլերովին չառաջարկվեց ոչ մի պետական պաշտոն, և նա ստանձնեց «Ազատ Ռուսաստան» ՀԿ ղեկավարությունը: Նշենք, որ «Ազատ Ռուսաստան» ՀԿ-ն հիմնվել է հենց Մ.Կոլերովի կողմից 2000թ. և բավական ամուրֆ ու ոչ մի կոնկրետ գործառույթ չունեցող կազմակերպություն է:

Արտասահմանյան երկրների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչությունը ՌԴ նախագահի վարչակազմում ստեղծվել է 2005թ. մարտին՝ հիմնականում մեկ կարևոր գործառույթ կատարելու նպատակով՝ խափանել ԱՊՀ տարածքում «թավշյա հեղափոխությունների» իրագործումը: Սակայն անցած տարիների ընթացքում վարչության գործունեությունը գրեթե ոչ մի դրական արդյունք չի տվել, ավելին՝ վատթարացել են ՌԴ հարաբերությունները ԱՊՀ որոշ երկրների հետ: Եվ այս ամենը՝ չնայած այն բանին, որ վարչության գործունեության ապահովման համար մեծ գումարներ են հատկացվել թե՛ ՌԴ նախագահի վարչակազմի բյուջեից, թե՛ այլ աղբյուրներից: Կոլերովի գործունեության մի մասն է կազմել իր ղեկավարած վարչության վարչաֆինանսական հնարավորությունների օգտագործումը՝ իր անձին մոտ կանգնած խմբերին մեծ գումարներ հատկացնելու համար: Միայն «սոցիոլոգիական հետազոտություններ» անցկացնելու համար Կոլերովի վարչությունը անցած 2 տարիների ընթացքում ծախսել է ավելի քան \$5 մլն: Այստեղ պետք է նշել, որ բուն «հետազոտություններն» իրականացվել են ցածր մակարդակով, և, ասենք, Բելառուսի բնակչության կարծիքը ՌԴ-ի հետ հարաբերությունների մասին հետազոտության համար Բելառուս չի ուղարկվել անգամ մեկ մասնագետ՝ դաշտային հետազոտություններ իրականացնելու համար: \$500 հազ. արժեքով «սոցիոլոգիական հետազոտությունը» կատարվել է Մոսկվայից՝ հեռախոսագանգերի միջոցով:

Այս պարագայում բավական լուրջ քննադատություն Մ.Կոլերովի հասցեին հնչել է անցած տարի ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Ս.Սոբյանինի կողմից, որը, ըստ որոշ աղբյուրների, խնդրել է Վ.Պուտինին ազատել Մ.Կոլերովին պաշտոնից: Սակայն ազատումը ինչ-ինչ պատճառներով տեղի չի ունեցել:

2007թ. սկզբին Մ.Կոլերովին է հանձնվում Էստոնիայի հետ «Թինեսմյագեի հուշարձանի» շուրջ ծագած վեճի տեղեկատվական ապահովման և Տալլինում բողոքի ակցիաների կազմակերպման գործառույթը: Դրա իրականացումը, մանավանդ բողոքի ակցիաների մասով,

բավական անհաջող է անցել. մեծ գումարներ են ծախսվել ցուցարարներին անվճար ոգելից խմիչքներով ապահովելու վրա, ինչի արդյունքում բողոքի ցույցը վերածվել է խուլիգանական ակցիայի:

Մ.Կոլերովի կողմից այս տարի կազմակերպվել են նաև Չեխիայում ԱՄՆ հակահրթիռային համակարգերի տեղակայման դեմ բողոքի ցույցեր, որոնց մեջ ընդգրկվել են նախկին չեխական անվտանգության ծառայության վետերաններ: Վերջիններիս հանդեպ չեխական հասարակության վերաբերմունքը բացասական է, ինչը բողոքի ակցիաները մարզինալացրել է և չի հանգեցրել որևէ դրական արդյունքի Ռուսաստանի համար:

Սակայն Մ.Կոլերովի ամենամեծ ձախողումը կարելի է համարել Ուկրաինայի խորհրդարանական ընտրություններում ռուսական կողմի գործունեության ամբողջական տապալումը:

Կոլերովի «ուկրաինական նախագիծը» և նրա ձախողումը

Վերջին շրջանում Ռուսաստանում տեղ գտած քննադատական վերաբերմունքը Վիկտոր Յանուկովիչի քաղաքական գծի նկատմամբ պայմանավորված է մի քանի օբյեկտիվ պատճառներով.

1. Յանուկովիչի «ռուսամետ» հայացքները բավական չափազանցված էին: Նրա ղեկավարած կառավարությունը ոչ մի քայլ չձեռնարկեց ռուսերենի՝ որպես երկրորդ պետական լեզվի, ընդունման համար, ինչպես նաև չպաշտպանեց Ուկրաինայի միացումը «Միասնական տնտեսական տարածքի» ստեղծման ռուս-ղազախա-բելառուսական նախագծին:
2. Յանուկովիչի քաղաքական թևն անցած մեկ տարվա ընթացքում աննախադեպ ջերմ հարաբերություններ հաստատեց եվրոպական քաղաքական շրջանակների, ինչպես նաև ԱՄՆ Հանրապետական կուսակցության հետ:
3. Յանուկովիչի «Շրջանների կուսակցությունը» հրաժարվեց ստանձնել ՆԱՏՕ-ի դեմ Ուկրաինայում բողոքի ակցիաների ղեկավարությունը:

Յանուկովիչի պարագայում ռուսական ազդեցության կորստի և Ուկրաինայում արտա-հերթ խորհրդարանական ընտրությունների պայմաններում Մ.Կոլերովի կողմից մշակվեց և ՌԴ ղեկավարության մասնակի աջակցությունը ստացավ Ռուսաստանի՝ Ուկրաինայում նախընտրական գործընթացներին մասնակցության ռազմավարությունը: Այս ռազմավարության հիմնաքարը հետևյալն է. բոլոր հնարավորություններն ուղղել Ուկրաինայի կոմունիստական կուսակցության դիրքերի ամրապնդմանը, նոր խորհրդարանում «Շրջանների կուսակցությանը» ստիպել կոալիցիա կազմել կոմկուսի հետ և ընդունել վերջինիս որոշ պահանջները ՌԴ հարաբերությունների զարգացման վերաբերյալ: «Ուկրաինական նախագիծ» իրականացման համար, ըստ որոշ տվյալների, Կոլերովի կողմից հավաքագրվել է մոտ \$100 մլն, որի մի մասը տրվել է ուկրաինական կոմկուսին, մի մասը՝ Կոլերովին մոտ կանգնած ռուս քաղաքական տեխնոլոգներին՝ տեղեկատվական գործողություններ իրականացնելու համար: Մասնավորապես, ստեղծվել է ուկրաինական կոմկուսի ԿՊՆՅՈւՍ տեղեկատվական ռեսուրսը (<http://www.kpnews.com>), որը պետք է զբաղվեր «նարնջագույն» ուժերի քննադատությամբ: Սակայն ռուս քաղաքական տեխնոլոգների հիմնական հարվածն ուղղվել է Վիկտոր Յանուկովիչի թևին, ինչը հարուցել է թե՛ ուկրաինական կոմունիստների ղեկավար Պ.Միմոնենկոյի, թե՛ Վ.Յանուկովիչի դժգոհությունը, և Ուկրաինայի կոմկուսի դժգոհությունը Գ.Զյուզանովի միջնորդությամբ հասցվել է Ս.Սոբյանինին:

Վ.Յանուկովիչի և Պ.Միմոնենկոյի հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել դադարեցնել տեղեկատվական հարվածները միմյանց դեմ: Սակայն Կոլերովի կողմից ֆինանսավորվող քաղաքական տեխնոլոգները հրաժարվել են դա անել, փոխել են ԿՊՆՅՈւՍ ինտերնետ ռեսուրսի գաղտնաբառերը և շարունակել արդեն Մոսկվայից ուկրաինական կոմկուսի անունից հարվածներ հասցնել Վ.Յանուկովիչի թևին:

Միևնույն ժամանակ, Կոլերովի կիևյան թևը տեղափոխվել է Ղրիմ և արդեն այնտեղի կոմունիստների ղեկավար Գրաչի միջոցով սկսել է հակաքարոզչություն իրականացնել Պ.Միմոնենկոյի դեմ: Ստեղծված իրադրությունը Ուկրաինայում բողոքի մեծ ալիք է բարձրացրել

թե՛ ուկրաինական, թե՛ ռուսական քաղաքական շրջանակներում: Ըստ հավաստի տեղեկությունների՝ ՌԴ նախագահ Վ.Պուտինին, բացի Սերգեյ Սոբյանինից, Մ.Կոլերովի գործունեության պատճառով ստեղծված դրության բարդության մասին զեկուցել են ՌԴ արտաքին գործերի նախարար Ս.Լավրովը և արտաքին հետախուզության ղեկավար Վ.Լեբեդևը: Նշենք նաև, որ համաձայն վստահելի աղբյուրների, հենց Վ.Լեբեդևն է ԱՊՀ գլխավոր քարտուղար նշանակվելուց հետո խնդրել Վ.Պուտինին Մ.Կոլերովին ազատել զբաղեցրած պաշտոնից և իրեն հանձնել ԱՊՀ տարածքում ռուսական դիրքերի ամրապնդման գործառույթը: Մոդեստ Կոլերովի փոխարեն Արտասահմանյան երկրների հետ միջտարածաշրջանային և մշակութային կապերի վարչության ղեկավար է նշանակվել Նիկոլայ Ցվետկովը, որը հատուկ ծառայություններում աշխատանքի մեծ փորձ ունի:

Մոդեստ Կոլերովի պաշտոնանկությունը լուրջ ազդեցություն կարող է ունենալ ԱՊՀ տարածքում Ռուսաստանի քաղաքականության վրա: Հատուկ ծառայությունների աշխատակիցների դիրքերի ուժեղացումը ԱՊՀ տարածքում վարվող քաղաքականության մեջ կարող է լրջորեն ռացիոնալացնել միջպետական հարաբերությունները:

Ինչ վերաբերում է Մոդեստ Կոլերովին, ապա կարելի է սպասել, որ հնարավոր փոփոխություններ կարող են կրել նրան ենթակա վերլուծական և տեղեկատվական ռեսուրսները: Արդեն իսկ խոսակցություններ են պտտվում այն մասին, որ ՌԵԳՆՈՒՄ տեղեկատվական գործակալությունը շուտով կարող է զրկվել բավական լուրջ գովազդային պայմանագրերից, իսկ «Ժողովրդավարության պետական ինստիտուտ» հիմնադրամը՝ պետական կառույցների միջնորդությամբ գոյացող մասնավոր ֆինանսավորումից:

*Սևակ Մարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ*

ԱՄԵՐԻԿԱ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ԱՌԵՎՏՈՒՐ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեև այս տարվա հուլիսի 1-2-ը ամերիկյան Քենեդանկայորտում կայացած Բուշ-Պուտին գագաթաժողովից հետո ռուս-ամերիկյան օրակարգում գտնվող առանցքային հարցերից և ոչ մեկում նկատելի առաջընթաց չգրանցվեց և բավական հիմնավորված էր թվում այն վարկածը, ըստ որի՝ թե՛ Ռուսաստանում, թե՛ Միացյալ Նահանգներում նախընտրական արշավների մեկնարկով լուրջ տեղաշարժ այլևս սպասելի է միայն Կրեմլում ու Սպիտակ տանը նոր վարչակազմերի գալուց հետո, սակայն վերջին մի քանի շաբաթների ընթացքում ի հայտ եկան նշաններ, որոնք թույլ են տալիս խոսել ամերիկա-ռուսական առաջիկա պայմանավորվածությունների մասին:

Այս պարագայում, սակայն, հարցի կարևորությունը ոչ այնքան այն է, թե ինչ կետերում է հավանական պայմանավորվածությունների ձեռքբերումը, որքան այն, որ Սառը պատերազմի ավարտից հետո Վաշինգտոնը հարկադրված է փոխզիջումային տարբերակով բանակցություններ վարել Մոսկվայի հետ առաջնային կարևորություն ունեցող միջազգային մի շարք խնդիրների վերաբերյալ:

Փոփոխություններ ամերիկյան քաղաքականությունում

Տարվա սկզբից լրջորեն սրված ռուս-ամերիկյան հակասությունների առանցքային կետերից էր Լեհաստանում ու Չեխիայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) համակարգի տարրերի տեղակայման հարցը: Մ.թ. փետրվարի 10-11-ը Մյունխենում կայացած անվտանգության հարցերով միջազգային համաժողովի ժամանակ և հունիսի 6-8-ը գերմանական Հայլիգենդամում տեղի ունեցած Մեծ ութնյակի հերթական հանդիպման ընթացքում ռուսական դիվանագիտության գործադրած ճնշումները Վաշինգտոնի նկատմամբ, թեև համարվեցին աննախադեպ 1991-ից ի վեր, սակայն հարցի վերաբերյալ ամերիկյան քաղաքականության մեջ նկատելի փոփոխություններ չգրանցվեցին:

Բայց հոկտեմբերի 23-ին գտնվելով Չեխիայի մայրաքաղաք Պրահայում՝ ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը կատարեց բավական անսպասելի հայտարարություն: Խոսելով Լեհաստանում ու Չեխիայում ԱՄՆ ՀՀՊ տարրերի տեղակայման հարցի շուրջ՝ Գեյթսն ասաց, թե, անշուշտ, Վաշինգտոնը շարունակելու է նշված երկրներում ՀՀՊ տարրերի տեղակայման աշխատանքները, սակայն Միացյալ Նահանգներում պատրաստ են հետաձգել վերջիններիս գործարկումը «մինչև միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների առումով Իրանը սպառնալիք չներկայացնի»:

Թեև Վաշինգտոնը շարունակում է կարևորել Արևելյան Եվրոպայում ՀՀՊ տարրերի տեղակայումը, սակայն հիմնականն այս պարագայում այն է, որ Գեյթսի նման հայտարարությունն, իրականում, նշանակում է քաղաքականության փոփոխություն¹:

¹ Ի դեպ, չի կարող պատահական լինել, որ Գեյթսը նման հայտարարություն արեց կամ ստիպված եղավ նման հայտարարություն անել հոկտեմբերի 21-ին Լեհաստանում կայացած խորհրդարանական ընտրություններից հետո, որի ժամանակ ամերիկամետ համարվող Կաչինսկի եղբայրների «Օրենք և արդարություն» կուսակցությունը պարտվեց ավելի եվրոպամետ Դոնալդ Տուսկի «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցությանը: Հատկանշական է, որ հաղթանակից հետո՝ հոկտեմբերի 31-ին, Տուսկը հայտարարեց, թե 2008թ. Իրաքից դուրս է բերելու լեհական զորքերը: Չի կարելի բացառել, որ Լեհաստանի խորհրդարանական ընտրությունների նման արդյունքները, հետևաբար՝ Վարշավայի արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկած փոփոխությունները ոչ միայն գերմանական, այլև ռուսական ներգրավվածության արդյունք էին:

Նույն օրը ԱՄՆ պաշտպանության նախարարը որոշեց կատարել ևս մեկ՝ պակաս կարևորություն չունեցող մի հայտարարություն: Անդրադառնալով ՆԱՏՕ-ին Ուկրաինայի անդամակցության հարցին՝ Պենտագոնի ղեկավարը նշեց, թե «այն, թերևս, չի վերաբերում հավանական լինելու ոլորտին՝ կարճաժամկետ հեռանկարում»: Սակայն առանձնացավ հատկապես այն հանգամանքը, որ ներկայացնելով այդ դիրքորոշումը՝ Ռոբերտ Գեյթսն այն հիմնավորեց հարցի առնչությամբ Ուկրաինայում «էական ներքին ընդդիմության առկայությամբ»: Փաստորեն, անդրադառնալով Արևմուտքի համար կարևոր համարվող ՆԱՏՕ-Ուկրաինա հարաբերությունների հեռանկարին՝ Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարը հարկ համարեց կարևորել մի գործոն, որն, իրականում, հանդիսանում է հարցին վերաբերող ռուսական քաղաքականության տարր:

Վերջին շաբաթների ընթացքում ամերիկա-ռուսական բանակցությունների համատեքստում տեղ գտած հաջորդ կարևոր տեղաշարժը Կոսովոյի հարցում ԱՄՆ դիրքորոշման մեջ է հայտ եկած փոփոխությունն է:

Նոյեմբերի 5-ին Վիեննայում կայացավ Կոսովոյի հարցով Բելգրադի ու Պրիշտինայի միջև ուղղակի բանակցությունների չորրորդ ռաունդը¹: Չնայած այստեղ նույնպես պահպանվեցին կողմերի սկզբունքային տարաձայնությունները, սակայն չէր կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ կողմերի քննարկմանը ներկայացված նոր առաջարկության փաթեթը հեղինակված էր Մոսկվայի կողմից²: Նշվածն ավելի հիմնավոր է դառնում, եթե հաշվի առնենք հոկտեմբերի 29-ին Կոսովոյի հարցի առնչությամբ ԱՄՆ-ի կողմից արված նոր առաջարկությունը՝ ևս 12 տարով սառեցնել Կոսովոյին անկախություն շնորհելու գործընթացը³:

Սակայն Կոսովոյի հարցում ամերիկյան քաղաքականության մեջ էական տեղաշարժն արտահայտվեց ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի հոկտեմբերի 27-ի հայտարարությամբ: Գտնվելով Աֆղանստանում՝ Գեյթսն ասաց, թե Վաշինգտոնում քննարկվում է ՆԱՏՕ-ի կողմից ստեղծված «KFOR»-ի⁴ կազմից ամերիկյան զորքերի դուրսբերման հարցը: Նման քայլն, իրականում, դժվար թե նշանակի, թե ԱՄՆ-ում որոշում են կայացրել դուրս գալ խաղից: Եվ ոչ էլ այնքան նշանակում է, թե այդ կերպ Կոսովոյի հարցի պատասխանատվությունը դնելով Եվրամիության վրա՝ Վաշինգտոնը հարցի առնչությամբ ռուս-ամերիկյան լարվածությունը փոխանցում է ռուս-եվրոպական հարաբերություններին: Ներկայացվածից զատ, Գեյթսի այդ հայտարարությունը պետք է ընկալել որպես Մոսկվային արվող զիջում:

Եվ վերջապես, ռուս-ամերիկյան օրակարգին վերաբերող չորրորդ կետը, որի շուրջ նկատելի է տեղաշարժը, Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրին (ԵՍՍՄՊ) առնչվող բանակցություններն են⁵:

Հոկտեմբերի 30-ին «*The International Herald Tribune*»-ը, հղում կատարելով ամերիկյան անանուն դիվանագիտական աղբյուրի վրա, գրեց, թե Վաշինգտոնը պատրաստ է ԵՍՍՄՊ գծով զիջումներ կատարել Մոսկվային՝ փոխարենը ՄԱԿ Անվտանգության խորհրդում ակնկալելով վերջինիս աջակցությունն Իրանի դեմ նոր պատժամիջոցների սահմանման հարցում:

¹ Սերբիայի ու Կոսովոյի միջև ընթացող բանակցությունների այդ ձևաչափի կազմակերպիչը Կոնտակտային խումբն է, որը բաղկացած է Եվրամիության, Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների ներկայացուցիչներից:

² Ըստ այդ նոր փաթեթի՝ առաջարկվում է Սերբիայի ու Կոսովոյի միջև հաստատել այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն Պեկինի ու Հոնկոնգի (Սյանգան) միջև (չինական մոդել): Այն բացառում է Կոսովոյի անկախացումը Սերբիայից, սակայն Պրիշտինային շնորհում է լայն իքնավարություն:

³ Հարկ է նշել, որ ավելի վաղ գլխավորապես ԱՄՆ նախաձեռնությամբ այս տարվա դեկտեմբերի 10-ը սահմանվել էր որպես վերջնաժամկետ: Եթե մինչև այդ օրը սերբերն ու այլաբանները չկարողանան փոխհամաձայնության գալ, ապա վերջիններս, փաստորեն, կարող են հոչակել իրենց անկախությունը Բելգրադից:

⁴ «KFOR»-ը Հյուսիսատլանտյան դաշինքի կողմից Կոսովոյում անվտանգության ապահովմանը միտված կռալիցիոն ռազմուժի հապավումն է:

⁵ Հիշեցնենք, որ ս.թ. հուլիսի 14-ին սառեցնելով ԵՍՍՄՊ գծով ստանձնած պարտավորությունների կատարումը՝ Մոսկվան հայտարարել է, թե իր պահանջների չբավարարման դեպքում այս տարվա դեկտեմբերի 12-ին դուրս կգա պայմանագրից:

Նոյեմբերի 6-ին ելույթ ունենալով Եվրոպայում անվտանգությանն ու համագործակցությանն առնչվող կառավարական հատուկ հանձնաժողովի առջև՝ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով օգնականի տեղակալ Դևիդ Կրեմերը հայտարարեց, թե Վաշինգտոնը պատրաստ է սկսել ԵՍՄՊ վավերացման գործընթացի քննարկումը:

Հայտնի է, որ Ռուսաստանը մեղադրում է Արևմուտքին ԵՍՄՊ-ն չվավերացնելու մեջ: Պայմանագիրը հնարավորություն կտա ոչ միայն սահմանափակել Ռուսաստանի սահմանի երկայնքով առկա ՆԱՏՕ անդամ երկրների զինված ուժերի սովորական սպառազինությունների ու մարդուժի տեղակայումը, այդ ոլորտը թափանցիկ դարձնել Մոսկվայի համար, այլև ռուսական կողմին կարող է մաս դարձնել ՆԱՏՕ անդամ պետություններում սովորական սպառազինությունների ու բանակի կրճատման գործընթացի վերահսկողությանը:

Սակայն կարևոր է այն, որ հայտնի են նաև ԵՍՄՊ գծով ԱՄՆ-ին ուղղված ռուսական հիմնական պահանջները.

- ՆԱՏՕ անդամ հետխորհրդային բալթյան երեք երկրներում չտեղակայել ՆԱՏՕ-ական ուժեր,
- սահմանափակել ՆԱՏՕ-ական ուժերի տեղակայումը Լեհաստանում, Սլովակիայում, Հունգարիայում և Ռումինիայում:

Հետևություններ

Այսպիսով, եթե փորձենք ընդհանրացնել, ապա միջազգային կարևորության մի շարք հարցերում ամերիկյան քաղաքականության մեջ ի հայտ են եկել փոփոխություններ, որոնք բոլորն էլ առնչվում են Ռուսաստանին: Սակայն գլխավորն այստեղ պետք է լինեն հետևյալ երեք կետերը.

- քանի որ նշված տեղաշարժերը փոխկապակցված են, ապա ռուս-ամերիկյան առաջիկա հավանական պայմանավորվածությունները կրելու են համալիր բնույթ, իսկ դա նշանակում է, որ նրանք ներառելու են նաև այսօրվա միջազգային հարաբերություններում կարևոր համարվող այլ հարցեր ևս, որոնց մեջ առաջինը, թերևս, պետք է նշել իրանականը,
- քանի որ Էսկան նշանակության հարցերում ամերիկյան քաղաքականության մեջ ի հայտ եկած փոփոխությունների մասին տեղեկությունները ստացել են հրապարակային բնույթ, ապա տեղին կլինի ենթադրել, որ ամերիկա-ռուսական մեծ առևտուրը կամ առնվազն նրա որոշ բաղկացուցիչներ բանակցությունների փուլից արդեն իսկ անցել են կիրառման փուլ¹,
- 1999թ. Հարավսլավիայի ու 2003թ. Իրաքի կամպանիաներից հետո առաջին անգամ Վաշինգտոնում փորձում են իրենց համար առաջնային կարևորություն ունեցող հարցերից մեկը (իրանական) լուծել միջազգային այլ ուժի կենտրոն(ներ)ի հետ փոխպայմանավորվածության ճանապարհով. այս հետևությունը ոչ այնքան կարևոր է կոնկրետ դեպքի կապակցությամբ, որքան այն պատճառով, որ եթե դա այդպես է, ապա միջազգային հարաբերություններին վերաբերող ամերիկյան ռազմավարության մեջ, թերևս, տեղ է գտել սկզբունքային փոփոխություն:

Ներկայացվածի համատեքստում բավական ինտրիգային բնույթ են ստանում ս.թ. հոկտեմբերի 15-16-ը Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի այցելությունը Թեհրան և տարածաշրջանային անվտանգության ապահովման, ռազմատեխնիկական ու միջուկային համագործակցության ոլորտներում նրա պայմանավորվածությունները Իրանի գերագույն առաջնորդ, այսօրվա Խամենեյիի հետ: Իրանը միակ կետն է, որի միջոցով Մոսկվան կարող է ճնշում բանեցնել Վաշինգտոնի նկատմամբ, և միակ կետն է, որի հետ կապված ռուսական զիջումները կհետաքրքրեն ամերիկացիներին:

¹ Օրինակ, կարող է այդ մասին վկայել նաև ս.թ. հոկտեմբերի 26-ին պորտուգալական Մաֆրա քաղաքում կայացած ԵՄ-Ռուսաստան հերթական գագաթաժողովի ժամանակ Պուտինի բավական կոշտ հայտարարությունը, որով նա Լեհաստանում ու Չեխիայում ԱՄՆ ՀՀՊ տարրերի տեղակայումը համեմատեց 1962թ. Կարիբյան ճգնաժամի հետ:

Այդ իմաստով հասկանալի են դառնում նաև վերջերս ակտիվացած ամերիկա-իրանական բանակցությունները Իրաքի հարցով: Ամերիկա-ռուսական վերը նշված բանակցությունները Թեհրանի համար պետք է հստակ ազդանշան լինեն, որ առաջիկա շաբաթները կարող են շատ էական լինել սեփական ազգային անվտանգության առումով: Պատահական չէ, որ նոյեմբերի 2-3-ը Ստամբուլում կայացած Իրաքի հարցով միջազգային համաժողովում Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին ներկայացել էր, իր բառերով ասած, Իրաքում կայունություն հաստատելու նոր առաջարկներով:

Եվ վերջապես, թերևս, պետք է ներկայացվածի լույսի ներքո դիտարկել նաև այսօրվա Վրաստանում առկա ներքաղաքական լարվածությունը, և չնայած նարնջագույնների հաղթանակին, ուկրաինական կառավարության կազմավորման հետ կապված շարունակվող անորոշությունը: Դժվար թե ռուս-ամերիկյան պայմանավորվածությունները չառնչվեն նաև հետխորհրդային արեային:

*Մարգիտ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

НАРОДЫ БЕЗ ГОСУДАРСТВА. КОЛЛЕКЦИЯ ФАКТОВ¹

Одна из проблем народов, не имеющих своих государств, заключается в сфере терминологии и права. Так, размыты понятия «народ» и «нация», следовательно, неясно, какая группа людей может считаться народом и претендовать на создание своего государства. В научной и юридической литературе существует несколько определений этих понятий. Существует теория «номинализма» (ее адепты доказывают, что нацией может считаться группа людей, считающая себя нацией), «натурализма» (нация – это исторически сложившаяся группа людей), «волютаризма» (соответственно, группа людей, добровольно объединившаяся и считающая себя одной нацией). Сторонники «территориального принципа» утверждают, что нацией может считаться группа людей, компактно проживающая на определенной территории. Есть «лингвистический» принцип, который гласит, что нацией могут считаться люди, говорящие на одном языке, «ценностный» (нацию образуют люди, разделяющие определенные морально-этические ценности). Теория «цели» гласит, что нацией может считаться группа людей, имеющих общую историю и общую миссию. Автор фундаментального исследования «Философия национализма» (*The Philosophy of Nationalism*) Пол Гилберт (*Paul Gilbert*) высказывает мнение, что нацией можно считать только группу людей, претендующих на создание своего государства.

Также нет критериев, которые позволяют отнести ту или иную общину к числу народов, которые имеют право претендовать на создание независимого государства. Обычно таковым считают религиозно-этническое меньшинство, которое пытается отделиться от многонационального государства. Лидеры подобных движений предпочитают считать государства, от которых пытаются отделиться, империями-поработителями. Достаточно часто они априори отвергают сам принцип мультиэтнического государства, предпочитая создавать моноэтническое государство.

В 1991г. была создана Организация непредставленных народов (*Unrepresented Nations and Peoples Organization*). В числе учредителей были представители народов, населявших СССР, – армян, крымских татар, татар, латышей, эстонцев и грузин. Ныне в состав Организации непредставленных народов входят 69 этнических групп и меньшинств, насчитывающих более 150 млн человек. В их числе и народы, проживающие на территории стран бывшего СССР: татары, талыши, башкиры, чеченцы, ассирийцы, чувашаи, черкесы, крымские татары, марийцы, коми, удмурты, буряты, тувинцы и гагаузы. Среди членов сразу две курдские организации (представляющие иранских и иракских курдов) и Тайвань, де-факто являющийся независимым государством. Эти народы крайне различаются по многим параметрам. Их объединяет одно: их представителей нет в составе ведущих международных организаций, таких как ООН. Хартия Организации непредставленных народов гласит, что деятельность этой структуры базируется на пяти основных принципах: ненасилие, права человека, самоопределение и демократия, сохранение окружающей среды и толерантность. За полтора десятилетия шесть основателей Организации смогли создать свои государства: на политической карте мира появились независимые Грузия, Армения, Эстония, Латвия, Палау и Восточный Тимор (Тимор-Лешти).

В 1992г. Генассамблея ООН приняла Декларацию о правах лиц, принадлежащих к национальным или этническим, религиозным и языковым меньшинствам. Статья 1 Декларации гласит: «Государства охраняют на их территориях существование и самобытность национальных или этнических, культурных, религиозных и языковых меньшинств и поощряют создание условий для развития этой самобытности». В подавляющем большинстве случаев в 20 веке

¹ Washington ProFile, 9 Ноября 2007.

большие государства разными путями признавали уникальные особенности малых народов, проживающих на их территории. Им предоставлялись определенные культурные и лингвистические права, а в ряде случаев и автономия.

Монсеррат Губерно (*Montserrat Guibernau*), автор книги «Народы без государств» (*Nations Without States: Political Communities in a Global Age*), указывает, что в условиях современной западной цивилизации многие народы предпочитают не бороться за образование своих национальных государств. По ее мнению, это обусловлено демократическими изменениями, произошедшими в странах Запада: национальное государство изначально требовалось, прежде всего, для сохранения культурной и языковой самобытности малых народов. В случае если «материнское» государство предоставляло им подобные права, борьба за национальное самоопределение утрачивала привлекательность. Губерно подчеркивает, что сепаратистские настроения во многих странах Европы и Северной Америки, вероятно, будут существовать неопределенно долгое время, однако они не имеют шансов превратиться в мощные национально-освободительные движения. Ныне подобные взгляды разделяют, в основном, немногочисленные радикалы.

Майкл Китинг (*Michael Keating*), автор книги «Многонациональная демократия: народы без государства в постсуверенную эру» (*Plurinational Democracy: Stateless Nations in a Post-Sovereignty Era*), отмечает, что в последние десятилетия связь между народом и государством разорвана. Один народ не обязательно создает государство, в то же время государство не гарантирует счастья и процветания образовавшему его народу. Более того, в некоторых случаях государство вообще оказывается ненужным для достижения процветания, обеспечения безопасности и поддержания порядка. Демократия также не может считаться необходимым условием для создания и существования государств. Китинг уверен, что в обозримой перспективе государства не исчезнут, однако мир изменится – это будет сложная и зачастую противоречивая система распределения властных полномочий. Он отмечает, что народы, ныне не имеющие своего государства, в этой ситуации рискуют никогда его не обрести.

Гидон Готтлиб (*Gidon Gottlieb*), автор книги «Народ против государства» (*Nation Against State*), отмечает, что в 20 веке великие державы выделяли территории и позволяли создавать новые государства на основе принципа права на самоопределение. Все подобные переделы проходили после окончания трех крупнейших конфликтов – двух мировых войн и Холодной войны. Однако лишь единожды – после окончания Первой Мировой войны – подобные решения принимались коллективно всеми великими державами (Россия, где произошла большевистская революция, в этом процессе участвовала косвенно – она, например, предоставила независимость Финляндии). По мнению Готтлиба, большинство нынешних национальных и этнических конфликтов не может быть разрешено путем перекройки государственных границ и выделения каждому народу своего собственного государства.

В мире насчитывается несколько десятков самопровозглашенных государств, которые, однако, международное сообщество не считает таковыми. В большинстве своем это этнические анклавные территории, отколовшиеся от «материнских» стран. По данным Института изучения проблем самоопределения, действующего при Принстонском университете (*Lechtenstein Institute on Self-Determination at Princeton University*), самопровозглашенные государства обосновывают свои претензии на независимость по-разному. Как правило, они доказывают, что на данной территории исторически сложилась общность людей, объединенных религией, языком, культурой и пр., которые не видят своего будущего в составе иного государства. Особый вес подобные аргументы приобретают в случае, если на данной территории некогда существовало независимое государство. Однако стороны, выступающие против предоставления независимости, используют схожие доказательства. К примеру, противники независимости Палестины доказывают, что палестинского народа никогда не существовало, так же, как и одноименного государства.

Подобные дебаты ведутся практически во всех случаях, когда речь заходит о признании или не признании нового государственного образования. Причиной этого является двусмысленность современного международного права. К примеру, в 1975г. Хельсинское совещание по безопасности и сотрудничеству в Европе провозгласило принцип нерушимости государственных

ных границ, образовавшихся после окончания Второй мировой войны. С другой стороны, Конвенция ООН о гражданских и политических правах (вступила в силу в 1976г.) декларирует право наций на самоопределение. Международный суд (*International Court of Justice*) также в 1975г. вынес вердикт, согласно которому право на самоопределение принадлежит не государствам, а отдельным гражданам. Известный специалист по международному праву, сотрудник Кембриджского университета Марк Веллер (*Marc Weller*), называет этот парадокс «ловушкой самоопределения».

Карен Паркер (*Karen Parker*), автор книги «Случай самоопределения» (*The Case for Self-Determination*), отмечает, что современное международное право не может однозначно ответить на вопрос: что необходимо сделать, чтобы создать новое государство. В 20 веке, в результате краха колониальных империй, появился так называемый «декларативный» способ – то есть, некая территория просто объявляет о том, что она представляет собой независимое государство. Традиционный путь – так называемый «конституционный» – несколько сложнее. Он декларирует, что для приобретения полноценного статуса самопровозглашенным государствам необходимо международное признание. Формальный акт дипломатического признания означает, что одно государство признает независимый статус другого и полномочия его правительства (в международной практике всегда признается правительство той или иной страны, а не сама страна). Существует два типа официального признания – «де-факто» и «де-юре». Признание «де-факто» (то есть, на основе факта существования данной структуры) имеет «неофициальный» характер, однако этого достаточно, чтобы оба государства могли установить дипломатические отношения, взаимно признавали паспорта и визы и пр. Признание «де-юре» (то есть, на основе существующих международных норм) предусматривает установление межгосударственных отношений в полном объеме. Иногда признание «де-факто» предшествует признанию «де-юре». К примеру, Великобритания «де-факто» признала правительство большевиков легитимной властью России в 1921г., а «де-юре» – лишь три года спустя.

Признание также необходимо, если власть в стране меняется необычным путем – например, в результате переворота, революции или внешнего вторжения. Правительство «Талибана», которое де-факто управляло большей частью территории Афганистана в 1996-2001гг., было признано лишь тремя государствами мира, в то время как свергнутое им правительство, которое контролировало не более 12% территории страны, признавалось легитимным более чем 70-ью государствами. В июне 1940г. советскими войсками были заняты Латвия, Литва и Эстония. Эти страны утратили свою государственность и были инкорпорированы в состав СССР в статусе союзных республик. США не признавали легитимность этих действий СССР и считали страны Балтии независимыми, но оккупированными государствами. Посольства этих республик продолжали действовать в Вашингтоне, несмотря на протесты Москвы.

Любопытно, что в состав США ныне входят ранее независимые государства. К примеру, Конфедерацию Штатов США, появившуюся в 1861г. и исчезнувшую после поражения в Гражданской войне, официально признало одно из карликовых германских государств. Республику Техас, существовавшую на политической карте мира в 1836-1845-е годы, признали пять стран. Некоторые индейские племена, а также Гавайи также ранее являлись независимыми государствами, а ныне считаются народами, не имеющими своей государственности.

Битва за Курдистан

Курды являются самым крупным народом мира, не имеющим своей государственности. Большинство историков уверены в том, что курды (и их предки) проживают на этих территориях более 2 тыс. лет, то есть намного дольше, чем арабы и турки, имеющие свои государства. На протяжении истории курды неоднократно создавали независимые княжества. Эти факты являются важными аргументами сторонников создания независимого курдского государства.

Сегодня, по разным оценкам, насчитывается от 20 до 30 млн курдов. В Турции проживают 14-15 млн курдов, в Иране – 4.8-6.6 млн, в Ираке – 4-6 млн, в Сирии – 1-2 млн. Почти 2 млн

курдов разбросаны по странам Европы и Америки, где они создали мощные и высокоорганизованные общины. В странах бывшего СССР насчитывается 200-400 тыс. курдов, они проживают, в основном, на южном Кавказе и в России. Большинство курдов – мусульмане-сунниты. Часть курдов исповедует шиизм, часть – езиды (адепты уникального курдского религиозного культа).

За последние полтора века курды неоднократно пытались добиться независимости. В 1840-е годы курдский эмир из области Бохтан (входила в состав Османской Империи) возглавил движение за независимость. В 1842г. он начал чеканить свою монету и перестал признавать власть султана. Через пять лет Бохтан был занят турецкими войсками, а эмират ликвидирован. В 1854г., воспользовавшись Крымской войной, племянник мятежного эмира предпринял новую попытку создать независимый Курдистан. Он организовал восстание, которое изначально добились значительных успехов. Под контроль повстанцев попал крупный город Мосул. После этого курды начали готовить наступление на Эрзерум и Ван, на которые с севера наступали войска Российской империи. Однако турки подавили восстание.

В январе 1918г. президент США Вудро Вильсон выступил с речью перед Конгрессом США. Эта речь вошла в историю под названием «14 пунктов» (*Fourteen Points*). В ней содержались предложения по упрочению мира после окончания Первой мировой войны (де-факто, война закончилась только через 10 месяцев). Вильсон декларировал, что народы, входящие в состав Османской Империи (подразумевались и курды), должны получить право на самоопределение. Эти тезисы обсуждались на переговорах в Версале, на которых страны-победительницы решали судьбы мира – в результате на политической карте мира появилось множество новых государств. В Севрском договоре 1920г. указывалось, что курды имеют право создать свое государство, если пожелают этого. В 1923г. был принят Лозаннский договор: часть Курдистана, до начала Первой мировой войны входившая в состав Османской империи, была разделена между Турцией и двумя новообразованными государствами – Сирией и Ираком.

Тогда также были предприняты первые реальные шаги в сторону создания курдской государственности. В Мосульском вилайете Османской империи (нынешний Иракский Курдистан), занятом англичанами, некоторое время обсуждались планы организовать конфедерацию курдских княжеств. Британцы даже назначили курдского шейха правителем города Сулеймания. Однако в 1919г. шейх поднял восстание, арестовал британских представителей, провозгласил себя королем Курдистана. Достаточно быстро его отряды были разгромлены, а новожденное государство и сама идея курдской конфедерации были уничтожены. В 1922-1924 гг. на территории современной Турции существовало карликовое Королевство Курдистан.

Идея курдского государства была полностью похоронена правительством Турции, лидером которого был Мустафа Кемаль Ататюрк. В 1923г. Ататюрк денонсировал Севрский договор и отказался предоставить курдам независимость. В 1924г. Турция приняла закон, запрещающий использовать курдский язык, курдскую национальную одежду и само название «курды» (турецкие ученые объявили курдов «горными турками», одичавшими и забывшими исконный турецкий язык). Проводились массовые депортации курдов в Западную и Центральную Анатолию. В конце 1930-х годов восстания курдских сепаратистов (или борцов за независимость) в Турции были подавлены (любопытно, что в 1927г. в очередной раз восставшие курды провозгласили создание независимой Республики Арарат).

Курдские волнения в Турции стали причиной активизации курдских сепаратистов в соседних странах. В 1929г. была предпринята попытка создания курдской автономии или республики на территории советского Азербайджана. В 1946г. в иранском городе Мехабад было провозглашено создание курдской Мехабадской Республики, просуществовавшей несколько месяцев. В те же годы возникли первые курдские политические партии, в программы которых входили положения о необходимости создания независимого государства.

В начале 1979г., в результате Исламской революции в Иране, власть в Иранском Курдистане оказалась в руках курдов. Однако уже в скором времени начались вооруженные столкновения между отрядами курдов и посланными из Тегерана частями Корпуса Стражей Исламской Революции. В результате, Иран восстановил контроль над Иранским Курдистаном.

В 1964г. в Ираке вспыхнуло восстание курдов, которое продлилось до 1975г. Тогда курды получили право на автономию. Примерно в это же время к власти в Ираке пришел Саддам Хусейн, который начал проводить в отношении курдов политику репрессий (курды называют ее геноцидом). В последующие 15 лет иракская армия уничтожила более 8 тыс. курдских деревень – в войне применялись боевые отравляющие газы. Параллельно проводилась политика «арабизации» Курдистана. В 1991г., после разгрома армии Саддама Хусейна в Кувейте, державы-победительницы создали «зону безопасности» в Иракском Курдистане – в частности, ее воздушное пространство постоянно патрулировали американские и британские самолеты, которые были призваны лишить Саддама Хусейна возможности использовать военную силу для очередного усмирения курдов. В 1992г. в Иракском Курдистане впервые прошли выборы. После оккупации Ирака в 2003г. иракские курды вошли в состав парламента и правительства страны. Ведущие курдские партии в Ираке добиваются лишь автономии, поддерживая принцип федерального государства. В настоящее время в Иракском Курдистане существует фактически полунезависимое государство. По крайней мере, часть курдов надеется, что он станет основой будущего независимого и объединенного «Большого Курдистана».

Националистическое и сепаратистское движение Рабочая Партия Курдистана (РПК) было создано в 1974г., ее главной целью было создание независимого Курдистана. С 1985г. РПК ведет настоящую войну против властей Турции, требуя создания курдской автономии. В результате, за время конфликта погибло более 50 тыс. человек (данные разных источников различаются, варьируясь от 37 до 55 тыс.). В 1999 году турецкие спецслужбы арестовали в Кении Абдуллу Оджалана – бессменного лидера РПК. Оджалан был приговорен к смертной казни, из заключения он призвал своих последователей к отказу от насилия. После этого террористическая активность РПК на некоторое время сошла на «нет». Движение даже сменило название: сперва на Конгресс за Свободу и Демократию Курдистана, позднее – на Конгра-Гел. Оджалан остается в заключении.

Странно, что иерархи ОБСЕ пока не предложили подобного соглашения: ведь их миссия – содействовать мирному, а не иному разрешению конфликта. Они не вправе вяло реагировать на серийные угрозы официальных лиц, инциденты на линии соприкосновения, взвинчивание гонки вооружений. Посредники – не судьи, но обязаны отстаивать свою мирную миссию, давно взятую на себя сторонами. Ведь это, прежде всего, Организация по безопасности, а уж потом по сотрудничеству в Европе.

Неизбежно встанет и практический вопрос: куда должны отойти армяно-карабахские войска на период до определения статуса Нагорного Карабаха? Былые границы НКАО давно упразднены и Баку, и Степанакертом. К тому же они были столь изрезаны, что совершенно непригодны для размещения сил вдоль них даже на переходный период. Для скорейшего ухода с занятых территорий необходимы переговоры по спрямлению линии, которая временно послужила бы подобием условной «границы» между Азербайджаном и НК. Вряд ли Ереван возьмет на себя проведение таких переговоров, да и предоставит ли ему Степанакерт такой мандат?

Переговоры Баку – Степанакерт желательно начать как можно скорее, еще до заключения соглашения о безальтернативности мирного решения, чтобы не затягивать потом с отводом войск. Оттесняя НК от своих консультаций с Ереваном, Баку лишь затрудняет себе выход на переговоры со Степанакертом. Тем более что их не заменить контактами «между двумя общинами Нагорного Карабаха».

Принуждение к миру

Учитывая тяжкий груз истории армяно-азербайджанских конфликтов, к международной миротворческой операции в Карабахе предъявляются весьма специфические требования. Она должна быть гибкой по форме и жесткой по сути, краткой по срокам (примерно два-три года) из-за необычайной дороговизны, но надежной по конечным результатам.

Потребуется двухэтапный мандат, включая право применения силы против прямых нарушителей соглашения в любой период. На первом этапе для контроля за демилитаризацией освобожденных территорий необходимо разместить военных наблюдателей по линии соприкосновения и линии отвода (особенно в местах их пересечения с коммуникациями). Кроме того, потребуется размещение мобильной «ударной силы», способной по тревожному сигналу наблюдателей быстро выдвинуться к месту нарушения (возможно, даже к двум одновременно) и блокировать, а при необходимости и вытеснить нарушителей. Вместе с тем следует предусмотреть меры против нарушений, которые будут исходить якобы от гражданского населения.

На второй этап надо изначально заложить в мандате превращение миротворческой операции в операцию по принуждению к миру. Государства – участники операции должны дать твердые гарантии возобновить ее в указанном виде. Перерастание миротворческой операции при необходимости в операцию по принуждению к миру исключит или значительно сузит возможность возникновения у сторон соблазна вернуться к силовым методам после завершения первой фазы.

Такая жесткость международной операции в Карабахе оправдана тем, что на кону не только урегулирование нынешнего конфликта (как в Абхазии, Южной Осетии и Приднестровье). Речь идет и о необходимости полностью исключить на историческую перспективу кровавые столкновения азербайджанцев и армян, периодически омрачавшие жизнь всего региона и способные теперь серьезно осложнить международную обстановку в целом.

В.Н.Казимиров¹

¹ Посол, глава посреднической миссии России по Нагорному Карабаху в 1992–1996гг., заместитель председателя Ассоциации российских дипломатов.

ՊԱՅՔԱՐ ԱՆԴՐԿԱՍՊՅԱՆ ԳԱԶԱՍՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Կասպից ծովից գազի արտահանման այլընտրանքային ուղու կառուցման գաղափարն ակտիվորեն առաջ է մղվում ԱՄՆ-ի և Եվրամիության անդամ երկրների կողմից: Եվ եթե ԱՄՆ-ի համար այս հարցը զուտ քաղաքական նշանակություն ունի (թուլացնել տարածաշրջանի երկրների կախվածությունը ռուսական խողովակաշարերից և հետևաբար՝ ռուսական ազդեցությունից), ապա Եվրամիության համար այս հարցը կարևորվում է նաև տնտեսական առումով: Բանն այն է, որ եվրոպական գազի շուկան լուրջ կախվածություն ունի Ռուսաստանից: Այն թուլացնելու համար, ԱՄՆ և Եվրամիության ակտիվ ջանքերով, 1999թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանը, Վրաստանը, Թուրքիան և Թուրքմենստանը ստորագրեցին միջկառավարական հռչակագիր Անդրկասպյան գազամուղի կառուցման նախագծի վերաբերյալ¹:

Այս հռչակագրի համաձայն՝ գազամուղը Թուրքմենստանից Ադրբեջանի և Վրաստանի տարածքով պետք է ձգվեր դեպի Թուրքիա: Անդրկասպյան գազամուղը, որի երկարությունը պետք է կազմի մոտ 2000 կմ, գնահատվում է \$2-3 մլրդ, սակայն այլ հետազոտողներ կարծում էին, որ ծրագրի ընդհանուր արժեքը կհասնի մինչև \$9 մլրդ-ի²: Ինչևէ, բանակցությունների ընթացքում շահագրգիռ կողմերի միջև լուրջ խնդիրներ առաջացան. Ադրբեջանը և Թուրքմենստանը չէին կարողանում համաձայնության գալ, թե որ երկիրն ինչ չափով պետք է գազ մղի: Այս հակասություններն այնքան խորացան, որ ծրագրի իրականացման հիմնական համակարգող, Եվրոպայի խոշորագույն՝ անգլո-հոլանդական *Royal Dutch/Shell* ընկերությունը 2000թ. հոկտեմբերին նույնիսկ ստիպված էր փակել իր գրասենյակը Աշգաբադում: Հակասություններն առաջացան այն բանից հետո, երբ Ադրբեջանի ավիամերձ տարածքում՝ Շահդենիզում հայտնաբերվեցին գազի հսկայական պաշարներ, և եթե պաշտոնական Բաքուն սկզբում համաձայն էր, որ խողովակաշարով հոսող գազի միայն 30%-ը կազմի ադրբեջանական գազը, ապա հետագայում պահանջեց, որ իր «փայաբաժինը» հասցվի մինչև 50%-ի: Նման փոփոխությունն առաջացրեց Թուրքմենստանի նախագահի դժգոհությունը, և բանակցությունները, փաստորեն, դադարեցին, իսկ պայմանավորվածությունները մնացին թղթի վրա: Ադրբեջանի ղեկավարությունը համոզված էր, որ 2002-2003թթ. արդեն կհաջողվի գազ արդյունահանել Շահդենիզի հանքավայրից³, սակայն հիշեցնենք, որ իրականում միայն 2007թ. հաջողվեց սկսել գազահանքի շահագործումը: Երբ հայտնի դարձավ, որ Շահդենիզի հանքավայրում գազի պաշարները հասնում են մոտ 1 տրիլիոն խմ-ի⁴, Ադրբեջանը սկսեց ակտիվ բանակցություններ վարել Թուրքիայի հետ՝ այնտեղ սեփական գազի մատակարարման և նոր գազամուղի կառուցման հարցի շուրջ: Ըստ ադրբեջանցի շատ վերլուծաբանների՝ նման վարքագիծը (թուրքմենական գազից հրաժարումը) ձեռնտու չէր Ադրբեջանին, քանի որ վերջինս զրկվում էր միջինասիական գազի Արևմուտք արտահանման տարանցիկ երկիր դառնալու հնարավորությունից՝ այստեղից բխող տնտեսական և քաղաքական օգուտներով հանդերձ:

Չնայած տարածայնություններին և չեղյալ հայտարարված պայմանավորվածություններին, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ կողմերը նորից են վերակենդանացնում Անդրկասպյան գազամուղի կառուցման ծրագիրը և վերսկսում բանակցություններն այդ

¹ Energy Information Administration. *Caspian Sea Region*. February 2002. <http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>.

² TW-ը 38.

³ *Ализаде Ф.*, В России и Турции газовый праздник. Газета Зеркало, 22 ноября 2005.

⁴ Energy Information Administration. *Caspian Sea Region: Survey of Key Oil and Gas Statistics and Forecasts* July 2006 www.eia.doe.gov.

հարցի շուրջ: 2001թ. հոկտեմբերին Թուրքմենստանը և Ադրբեջանը նորից սկսեցին բանակցել գազամուղի կառուցման հարցի շուրջ: Սակայն մինչ այդ, նույն թվականի մարտին, Ադրբեջանի և Թուրքիայի միջև համաձայնագիր էր ստորագրվել նոր խողովակաշարի՝ Բաքու-Էրզրում գազամուղի կառուցման շուրջ: Նման դիրքորոշումը պայմանավորված էր ոչ միայն Բաքվի՝ սեփական գազը Թուրքիա և հետագայում Եվրոպա արտահանելու ցանկությամբ, այսպիսով նվազեցնելով Թուրքմենստանի ազդեցությունը, այլ նաև այն հաշվարկով, որ Կասպից ծովի ընդերքով գազամուղի կառուցումը քիչ հավանական է: Նման կարծիքը պայմանավորված էր մի քանի հանգամանքով:

Նախ՝ գոյություն չունեի Կասպից ծովի կարգավիճակի մասին միջազգային պայմանագիր տարածաշրջանի երկրների միջև և հետո՝ այս ծրագրի դեմ ակտիվորեն հանդես էին գալիս Ռուսաստանը և Իրանը: Վերջիններիս համար անընդունելի էր ցանկացած ծրագիր ԱՄՆ հովանու ներքո: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը նույնիսկ հանդես եկավ հայտարարությամբ՝ գազամուղի կառուցման ծրագիրը գնահատելով որպես «չստանդարտ» քայլ, որը կարող է վտանգել ծովի բնապահպանական վիճակը, և կոչ անելով հետաձգել նախագծի իրականացումը մինչև ծովի կարգավիճակի շուրջ բանակցությունների ավարտը¹: Ընդդիմանալով այս ծրագրին՝ Իրանը հույս ուներ, որ կողմերը կվերադառնան Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գազամուղի կառուցման գաղափարին, ինչի շուրջ նախկինում երկարատև բանակցություններ են վարվել: Ռուսաստանն ընդդիմանում էր այս ծրագրին նաև այն պատճառով, որ ցանկանում էր սեփական գազը մատակարարել Թուրքիային՝ առաջ քաշելով «Երկնագույն հոսք»՝ Սև ծովի ընդերքով գազամուղի կառուցման ծրագիրը, որի շուրջ բանակցությունները սկսվել էին դեռ 1997թ.: Սև ծովով մոտ 1213 կմ երկարությամբ գազամուղով (այս գազամուղի 400 կմ-նոց հատվածն անցնում է Սև ծովի ընդերքով) Ռուսաստանը պարտավորվել էր տարեկան 16 մլրդ խորանարդ մետր գազ մատակարարել Թուրքիային: Մինչև Անկարա ձգվող այս գազամուղով Գազպրոմը պետք է 25 տարում 365 մլրդ խմ գազ մատակարարեր թուրքական *Botas*՝ գազի առաքմամբ և մատակարարմամբ զբաղվող ընկերությանը: Օգտվելով Թուրքմենստանի և Ադրբեջանի միջև առկա տարածայնություններից՝ Ռուսաստանը կարողացավ նոր պայմանագիր կնքել տարածաշրջանի գազով հարուստ երկրի՝ Թուրքմենստանի նախագահ Սափարմուրատ Նիյազովի հետ, այսպիսով ամրապնդվելով որպես միջինասիական գազը միջազգային շուկա արտահանող երկիր:

Պաշտոնական Մոսկվան փորձում էր խոչընդոտել տարածաշրջանից գազի արտահանման ցանկացած այլ ծրագրի իրականացմանը: Այս պայքարում կարևոր տեղ էր հատկացվում «Երկնագույն հոսք» նախագծին, որը կարողացավ շահագործման հանձնել 2005թ. նոյեմբերին: Ընդհանրապես, թե՛ Ռուսաստանից, թե՛ Կենտրոնական Ասիայից և թե՛ Իրանից Արևմուտք՝ Եվրոպա ձգվող գազա- և նավթամուղների համար տարանցիկ երկիր դառնալը Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից էր: Չնայած Ռուսաստանը հետագայում հրաժարվեց Թուրքիայի տարածքով գազի երկրորդ ճյուղի կառուցման գաղափարից, սակայն պաշտոնական Անկարան շարունակում էր աջակցել Կասպից ծովի ավազանից իր տարածքով խողովակաշարերի կառուցման գաղափարին, մանավանդ որ 1990-ական թթ. վերջին այս հարցում նա ուներ Քլինթոնի վարչակազմի ակտիվ աջակցությունը: Ըստ ամերիկյան որոշ հեղինակների՝ Տրանսկասպյան գազամուղի կառուցման հարցում ամերիկյան աջակցության դեմ ակտիվորեն հանդես էին գալիս Վաշինգտոնում գործող ամերիկա-հայկական և ամերիկա-հունական լոբբիստական կառույցները²:

Չնայած Անդրկասպյան գազամուղն այդպես էլ չի կառուցվել, սակայն գաղափարը մինչև օրս էլ շրջանառվում է, և ԱՄՆ աջակցությամբ ժամանակ առ ժամանակ վերսկսվում են բանակցություններն այս հարցի շուրջ: Հատկապես Բաքու-Ջեյհանի կառուցումից հետո պաշտոնա-

¹ Nancy Lubin. *Energy Wealth, Development, and Stability in Turkmenistan*. NBR ANALYSIS., *Energy, Wealth, and Development in Central Asia and the Caucasus*, v. 10, # 3, august 1999, p-64.

² Nancy Lubin. *Energy Wealth, Development, and Stability in Turkmenistan*. NBR ANALYSIS., *Energy, Wealth, and Development in Central Asia and the Caucasus*, v. 10, # 3, august 1999, p-65.

կան Անկարան բազմիցս այս հարցը բարձարցրել է տարբեր բանակցությունների ժամանակ: 2006թ. Բաքու կատարած այցի ժամանակ Թուրքիայի նախկին նախագահ Ահմեդ Նեջեդ Սեզերը հերթական անգամ հարցը քննարկել է այդ երկրի ղեկավարության հետ¹: Ըստ Սեզերի՝ արդեն կառուցված Բաքու-Էրզրում գազամուղը կնպաստի այս ծրագրի արագ իրագործմանը:

Անդրկասպյան գազամուղի կառուցման հարցը մինչև օրս էլ մնում է արևմտյան տերությունների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ Թուրքմենստանի ներկա ղեկավար Ղուրբանդուլի Բերդիմուհամեդովը Մեծ Բրիտանիայի Էներգետիկայի նախարարի հետ հանդիպման ժամանակ հավաստիացրել է, որ ինքը շարունակում է քննարկել այլընտրանքային գազամուղի կառուցման հարցը²: Հարցով արևմտյան տերությունների հետաքրքրությունն այնքան մեծ է, որ Ադրբեջանը նույնիսկ հայտարարում է, թե Կասպից ծովի կարգավիճակի անորոշությունը չի կարող գազամուղի կառուցման խոչընդոտ լինել³: Ակնհայտ է, որ Անդրկասպյան գազամուղի կառուցման խնդիրը դարձել է լուրջ խաղաթուղթ արևմտյան տերությունների և հատկապես ԱՄՆ-ի համար: Վերջիններս այն ցանկանում են օգտագործել ոչ միայն Կենտրոնական Ասիայից գազի նոր պաշարների ստացման, այլ նաև Ռուսաստանից կախվածության թուլացման և տարածաշրջանում սեփական քաղաքական ազդեցության մեծացման համար:

Արմեն Մանվելյան

¹ ИА REGNUM «Новости», Алиев и Сезер намерены реанимировать идею строительства Транскаспийского газопровода., www.regnum.ru/news/571130.html 12.01.2006.

² ИА REGNUM «Новости», *Туркмения намерена экспортировать нефть и газ через Азербайджан и Турцию.* www.regnum.ru/news/888463.html 21.09.2007.

³ ИА REGNUM «Новости», МИД Азербайджана: *Нерешенность правового статуса Каспия - не проблема для реализации транскаспийского газопровода.* www.regnum.ru/news/883929.html 12.09.2007.

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պետության ազգային անվտանգության կարևորագույն որոշումներն ընդունվում են տվյալ երկրի (ազգային) անվտանգության խորհուրդների (ԱԽ) կողմից, որոնց գործունեությունը սահմանվում է այդ պետության սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով: Համաշխարհային պրակտիկայում ԱԽ օրենսդրությունում թեև ենթադրում են ընդհանրական նպատակներ, սակայն դրանց իրավական ձևակերպումները բավական բազմազան են և ուրույն: ԱԽ հիմնադրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդլայնել քաղաքական պատկերացումները երկրի որոշումների ընդունման մեխանիզմի, ԱԽ անդամների միջև փոխազդեցության խնդիրների մասին: Հռոմանոս մանրակրկիտ ուսումնասիրվում են Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) իրավական, իրավաքաղաքական հիմնական ասպեկտներն ու առանձնահատկությունները, բերվում են համեմատական վերլուծություններ այլ երկրների օրինակով:

Վրաստանի ԱԱԽ օրենսդրության առանձնահատկությունները

Վրաստանի ԱԱԽ իրավական հիմքերը դրվել են 1995-1996թթ.: ԱԱԽ օրենսդրական դաշտն ապահովում են երկրի 1995թ. ընդունված գլխավոր օրենքը՝ Սահմանադրությունը, «Ազգային անվտանգության խորհրդի մասին» երկու օրենքները: Վրաստանի ԱԱԽ առաջին օրենքն ընդունվել է Սահմանադրության ընդունումից մեկ տարի անց՝ 1996թ.: Ինչ վերաբերում է ԱԱԽ երկրորդ օրենքին, ապա այն կիրառություն է ստացել միայն վերջերս՝ «վարդերի հեղափոխությունից» հետո և գործում է մինչև օրս: Նշենք, որ ԱԱԽ նախորդ օրենքը, ի տարբերություն նորի, առանձնանում էր որոշ հիմնադրություններում նկատելի «լիբերալության» կամ «խաղաղասիրական» տարրերով: Մասնավորապես՝ օրենսդրության համաձայն, երկրի ԱԱԽ նիստերին կարող էին մասնակցել Աջարիայի ինքնավարության, ինչպես նաև Աբխազիայի առաջնորդները, որոնք բացակայում են գործող օրենքում: Ներկայիս օրենքում նման կարգավիճակ ընձեռված է միայն Վրաստանի խորհրդարանի նախագահին: Մյուս կողմից՝ նախորդի համեմատ, գործող օրենքի հիմնադրությունների զգալի մասն առանձնանում է խստությամբ, սահմանափակիչ և ռազմականացված շեշտադրումներով:

Նախորդի համեմատ գործող օրենքը միջազգային իրավունքի տեսանկյունից առավել կատարելագործված ու միջազգային չափանիշներին համարժեք փաստաթուղթ է: Գործող օրենքի առավելություններից մեկն էլ այն է, որ դրա նախագծման ու մշակման գործընթացին մասնակցել են ոլորտում հայտնի, հիմնականում արևմտյան փորձագիտական կազմակերպություններն ու մասնագետները: Նշենք առաջին հերթին Միջազգային անվտանգության խորհրդատվական խորհրդի (*ՄԱԽԽ/ISAB-International security advisory board*) գործունեությունն ու ավանդը Վրաստանի ԱԱԽ և ընդհանրապես երկրում գործող ազգային անվտանգության ինստիտուտների արդիականացման ու վերափոխման գործում¹:

ՄԱԽԽ-ը Վրաստանում գործունեությունն սկսել է 1998թ. հարավկովկասյան հանրապետության իշխանությունների հրավերով՝ Վրաստանի նախագահին և ԱԱԽ-ին անկախ ռազմավարական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: 1999թ. ՄԱԽԽ-ը պատրաստեց իր զեկույցը՝ նվիրված Վրաստանում ազգային անվտանգության սեկտորներում ու ինստիտուտներում բարեփոխումների անցկացման գործընթացին, որի արդյունքում ՄԱԽԽ փորձագիտական խումբը պատրաստում էր տարեկան զարգացման հաշվետվություններ և տրամադրում դրանք երկրի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին (վերջին՝ ամփոփիչ տարեկան հաշվետվությունը՝ 2006թ.):

¹ Միջազգային անվտանգության խորհրդատվական խորհրդի կենտրոնատեղին Մեծ Բրիտանիայում է: Այն ձևավորվել է 1996թ. մերձբալթյան երկրների ԱԳՆ և ՊՆ ղեկավարների խնդրանքով՝ նախկին խորհրդային համակարգից եվրատլանտյանին անցնելու գործընթացին աջակցելու նպատակով:

Մտորն փորձ է արվում վերհանել Վրաստանի ԱԱԽ օրենսդրական հիմքերի ընդհանուր նկարագիրն ու հիմնական առանձնահատկությունները՝ տալով այլ երկրների անվտանգության խորհուրդների իրավական հիմքերի համեմատական վերլուծությունը:

Դասակարգում՝ ըստ կատեգորիաների - Համաշխարհային պրակտիկայում ԱԽ-ները՝ իրենց համապատասխան իրավական բազայով, ազգային անվտանգություն և դրա ապահովում ասելով ենթադրում են երկու՝ ռազմական կամ ռազմականացված և քաղաքացիական ուղղվածություն: Այլ կերպ ասած՝ պետության անվտանգության ու պաշտպանության, դրանց ապահովման հիմնախնդիրներին տվյալ պետության ԱԽ օրենսդրական ակտերում հռչակված նպատակներն ու գործառույթները հիմնվում են այդ երկրի ռազմական, պաշտպանական պոտենցիալի⁶, թե՛ քաղաքացու իրավունքների ու ազատության ապահովման, հասարակության բարեկեցության ապահովման՝ որպես պետության անվտանգության կարևորագույն երաշխիքների սկզբունքների վրա: Թեև վերը նշված երկու մոտեցումները և դրանց իրացման մեխանիզմները տեսականորեն փոխկապակցված են և փոխլրացնում են մեկը մյուսին, այնուամենայնիվ, գործնականում դրանց իրացման ընթացակարգը տալիս է ոչ համարժեք, հաճախ էլ՝ հակադիր վեկտորներ, էապես տարբերակվում են նաև ազգային անվտանգության և դրա ապահովման համապատասխան չափորոշիչների ու ռիսկերի գնահատման մեթոդաբանությունները:

Այսպես, Վրաստանի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» գործող օրգանական օրենքը, ելնելով վերջինիս հիմնադրությունների ձևակերպումից, դասվում է ռազմականացված խորհրդի կատեգորիային: Օրենքի առաջին՝ «Ազգային անվտանգության խորհուրդը» հոդվածի 1-ին կետում սահմանված է. «Վրաստանի Սահմանադրության 99-րդ հոդվածի համաձայն, Ազգային անվտանգության խորհուրդը, որը ղեկավարում է Վրաստանի նախագահը, ստեղծվում է ռազմական շինարարության և ազգային պաշտպանության կազմակերպման նպատակներով»: Մույն օրենքի երկրորդ՝ «Ազգային անվտանգության խորհրդի իրավասությունները» հոդվածում առաջին պլան է մղվում պաշտպանական, ռազմական ասպեկտը: Առանձնացնենք սույն հոդվածում ներկայացված մի քանի հիմնական կետեր (մնացած կետերի մեծ մասում այս կամ այն չափով ազգային անվտանգության ապահովման տակ նույնպես դրվում է ռազմական, պաշտպանական ասպեկտը).

- ուսումնասիրում է ներքին ու արտաքին քաղաքականության այն հիմնական հարցերը, որոնք ուղղակի կապված են ազգային պաշտպանության ու անվտանգության ապահովման հետ.
- ուսումնասիրում է ծրագրեր՝ զինված ուժերի շինարարության և հզորացման, դրանց իրականացումն ապահովելու նպատակով.
- հետազոտում և վերլուծում է միջազգային հակամարտությունների գոտիներում առկա իրավիճակն ու հեռանկարները.
- մշակում է նախագծեր հավաքական անվտանգության համակարգերի հետ Վրաստանի համագործակցության վերաբերյալ.
- մշակում է օրենքների և այլ նորմատիվային ակտերի նախագծեր՝ պաշտպանական և անվտանգության հարցերի վերաբերյալ.
- ուսումնասիրում է զինված ուժերի մարտունակությանն ու մոբիլիզացիոն պատրաստությանը վերաբերող հարցեր.
- կորդինացնում է ռազմական գիտահետազոտական ուսումնասիրություններ.
- ամփոփում է ռազմական արդյունաբերության գործունեության ու զարգացման հեռանկարները.
- քննարկում է զինծառայողների պատրաստման, բաշխման, հավաքագրման և մոբիլիզացիային վերաբերող հարցեր.
- ուսումնասիրում է արտակարգ իրադրություն հայտարարված շրջանում Վրաստանի նախագահի ներկայացուցչի նշանակմանն առնչվող հարցեր:

Վրաստանի ԱԱԽ օրենքը, ըստ էության, այս առումով չի տարբերվում 1947թ. ստեղծված ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի օրենքից: ԱՄՆ համապատասխան օրենքում ազգային անվտանգության ու դրա ապահովման հասկացությունների տակ հասկացվում է

ուժային, հետախուզական, ներքին անվտանգության և կառավարական այլ ծառայությունների ու բաժանմունքների համագործակցությունը՝ առավելագույնս ինտեգրելու ներքին, արտաքին ու ռազմական քաղաքականությունը՝ ազգային անվտանգության համատեքստում: Վրաստանի կամ ԱՄՆ-ի համեմատ, ռազմական ասպեկտներն առավել ընդգծված են հատկապես Բելառուսի ԱԽ հայեցակարգային սահմանումներում՝ նախ այն պարզ պատճառով, որ Անվտանգության խորհրդի օրենսդրական հիմքերն ամրագրված են երկրի «Ռազմական հայեցակարգ» փաստաթղթում¹: Գրեթե նույն օրենսդրական սկզբունքով է գործում նաև Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը, որի անդամների շարքում նույնպես զգալի է զինվորականների քանակը²:

Ի տարբերություն Վրաստանի կամ Միացյալ Նահանգների, այլ սկզբունքի վրա է հիմնված, մասնավորապես, ՌԴ Անվտանգության խորհրդի օրենսդրությունում անվտանգության հասկացությունը, նրա գործառույթների տակ դրված մարդու, քաղաքացու անվտանգությունը: Մասնավորապես, 2004թ. հունիսի 7-ին ՌԴ նախագահի կողմից ստորագրված «Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի մասին» հրամանագրի երրորդ գլխում Անվտանգության խորհրդի հիմնական խնդիրները հանդիսանում են.

- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատության պաշտպանության, ՌԴ սուվերենության, անկախության և պետական ամբողջականության պահպանման, պետական իշխանության մարմինների փոխգործունեության կազմակերպման, պետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանման ուղղությամբ ՌԴ նախագահի կողմից՝ վերջինիս սահմանադրական լիազորությունների իրականացման համար պայմանների ապահովումը.
- անհատի, հասարակության և պետության կենսական նշանակության շահերի՝ որպես ազգային անվտանգության ապահովման հիմնական օբյեկտների սահմանումը, այդ օբյեկտների անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքների բացահայտումը.
- անհատի, հասարակության և պետության անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ որոշումների պատրաստումը.
- արտակարգ իրավիճակների կանխման ուղղությամբ օպերատիվ որոշումների պատրաստումը և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման կազմակերպումը, որոնք կարող են հանգեցնել սոցիալ-քաղաքական, տնտեսական, ռազմական, բնապահպանական և այլ էական հետևանքների:

ՌԴ ԱԽ օրենսդրական հիմքերը չեն տարբերվում նաև Ադրբեջանի «Անվտանգության խորհրդի մասին» օրենքից (ստեղծվել է 1997թ. ապրիլի 10-ին երկրի նախագահի հրամանագրով): Օրենքում հստակորեն սահմանվում է, որ «Անվտանգության խորհուրդը ապահովում է պայմաններ Ադրբեջանի նախագահի կողմից վերջինիս սահմանադրական լիազորությունները՝ քաղաքացու իրավունքների ու ազատության պաշտպանության, Ադրբեջանի Հանրապետության անկախության ու տարածքային ամբողջականության պահպանման ուղղությամբ իրականացնելու համար»:

Վրաստանի ԱԱԽ կարգավիճակը – Անվտանգության խորհուրդների, տվյալ պարագայում՝ Վրաստանի ԱԱԽ իրավական հիմնադրույթների կարևորագույն առանձնահատկություններից է խորհրդի ինստիտուցիոնալ կարգավիճակի, երկրի կարևորագույն որոշումների ընդունման համակարգում նրա դերի հարցը: Որպես կանոն, ԱԽ-ներն ունենում են խորհրդա-

¹ Ռազմական հայեցակարգի երկրորդ՝ «Ռազմական անվտանգության ռազմական-ռազմավարական հիմքերը» գլխում նշվում է, որ «Անվտանգության խորհուրդը Բելառուսի Հանրապետության ռազմական անվտանգության շահերի ապահովման համատեքստում սահմանում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, ռազմական շինարարության ու զինված ուժերի զարգացման սկզբունքները, կազմակերպում պետական կառավարման հանրապետական ու ռազմական կառույցների միջև փոխհամագործակցությունը»:

² Թուրքիայի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» գործող օրենքում սահմանվում է, որ «ԱԱԽ-ն, որը ղեկավարում է երկրի նախագահը, բաղկացած է վարչապետից, սպայակույտի պետից, Պաշտպանության, ՆԳ ու ԱԳ նախարարներից, Ցամաքային, ռազմածովային, օդուժի հրամանատարներից, Ժանդարներիայի գլխավոր հրամանատարից»:

տվական ինստիտուտի կարգավիճակ, որի շարքին դասվում է Միացյալ Նահանգների, Թուրքիայի, Իսրայելի, Լատվիայի, Բելառուսի, Մոլդովայի, Ղազախստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի ԱԱԽ-ն¹:

Այսպես, Վրաստանի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» օրգանական օրենքի 1-ին հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ «Վրաստանի Ազգային անվտանգության խորհուրդն իրենից ներկայացնում է Վրաստանի նախագահի հովանու ներքո խորհրդատվական մարմին»: Ի սկզբանե հասակեցնենք, որ անվտանգության խորհրդի «խորհրդատվական կարգավիճակ» սահմանումը, պայմանավորված տարբեր երկրների, տվյալ դեպքում՝ Վրաստանի ներքին քաղաքական, ներիշխանական ապարատից, կարող է մեծացնել քաղաքական ապակետը և ռիսկային գործոնը խորհրդի որոշումների ընդունման համակարգում: Խնդիրն այն է, որ ԱԽ կարգավիճակի հարցն ինքնին ենթադրում է պետական պատասխանատվության որոշակի մեխանիզմ: ԱԱԽ *խորհրդատվական կարգավիճակը* թեև ընդունված որոշումների համար պատասխանատվությունից չի ազատում որոշումը կայացրած պաշտոնյաներին, սակայն կարող է որոշակի անհամաչափություն (կամ անհամաձայնություն) բերել ԱԽ՝ որպես ինստիտուտի և երկրի կարևորագույն որոշումների համար պատասխանատու պաշտոնյաների միջև ձևավորված երկխոսությունում (ինստիտուտ-պաշտոնյա), ինչը, հետևաբար, կարող է բացասաբար ազդել որոշումների կայացման գործընթացի և արդյունքների վրա: Մյուս կողմից՝ իհարկե, վերոնշյալ անհամաչափության գործոնը կախված է նաև տվյալ պետության որոշումների ընդունման համակարգի արդյունավետությունից: ԱՄՆ-ի կամ Թուրքիայի պարագայում, որոնք ազգային անվտանգության ինստիտուտների կայացման հարցում ունեն պատմական մեծ անցյալ և փորձառություն, *ռիսկային էֆեկտը* բավական ցածր է նորանկախ այնպիսի պետությունների համեմատ, ինչպիսին Վրաստանն է²:

Փորք-ինչ այլ հարթությունում է գտնվում Ուկրաինայի Անվտանգության խորհրդի (Ազգային անվտանգության ու պաշտպանության խորհուրդ) իրավական կարգավիճակը, որին երկրի Սահմանադրության և 1996թ. ընդունված «Ուկրաինայի ազգային անվտանգության ու պաշտպանության խորհրդի մասին» օրենքի համաձայն, տրվում են համեմատաբար սահմանափակ լիազորություններ: Ուկրաինայի Սահմանադրության 5-րդ՝ «Ուկրաինայի նախագահը» գլխի 107-րդ հոդվածի համաձայն, «Ուկրաինայի Ազգային անվտանգության ու պաշտպանության խորհուրդը հանդիսանում է Ուկրաինայի նախագահին կից ազգային անվտանգության ու պաշտպանության հարցերով կոորդինացնող մարմին»³:

Ի տարբերություն նշված երկրների, հակադիր դաշտում է տեղավորվում մասնավորապես ՌԴ ԱԽ իրավական կարգավիճակը, որին տրվում է բարձրագույն օրենսդրական կարգավիճակ՝ սահմանադրական մարմին՝ համապատասխանաբար ենթադրելով ինստիտուտի և նրա անդամների պատասխանատվության մեծացում:

ԱԱԽ կազմը - Վրաստանի և ընդհանրապես ԱԽ-ների օրենսդրության առանցքային կետերից մեկն էլ առնչվում է խորհրդի անդամների կազմին: ԱԽ կազմին վերաբերող իրավական հիմնադրույթների վերլուծությունը թույլ է տալիս պարզաբանել նախ երկրի անվտանգության գծով որոշումների կայացման պատասխանատուներին, ԱԽ անդամների իրավական կարգավիճակին, երկրի իշխանական-քաղաքական դաշտում նրանց ազդեցությանն առնչվող հարցեր: Այսպես, Վրաստանի ԱԱԽ օրգանական օրենքի երրորդ՝ «Ազգային ան-

¹ Հետաքրքրական է, որ Իսրայելի Ազգային անվտանգության խորհուրդը ստեղծվել է միայն վերջերս՝ 1999թ. մարտին կառավարության 4889 որոշման հիման վրա: Իսրայելի ԱԱԽ-ը գործում է երկրի վարչապետի գրասենյակին կից: Այդ օրենքի համաձայն, «ԱԱԽ նպատակը Իսրայելի վարչապետին ու կառավարությանը՝ որպես ազգային անվտանգության հարցերով կենտրոնական խորհրդատվական մարմին սպասարկումն է»: Իսրայելի ԱԱԽ-ը գերազանցապես կենտրոնացած է պաղեստինյան հիմնահարցի, ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում:

² Ի դեպ, Թուրքիայի ԱԱԽ-ը ձևավորվել է դեռևս նախորդ դարի 30-ականներին, ավելի վաղ, քան ԱՄՆ համապատասխան ինստիտուտը (1949թ.): Սասնավորապես 1933թ. ապրիլի 24-ին 14443 որոշմամբ հիմնադրվեց, այսպես կոչված, Թուրքիայի «Գերագույն պաշտպանական ասամբլեան»՝ Թուրքիայի սպայակոյտի պետի (*Chief of the General staff*) նախաձեռնությամբ: Միայն 1962թ. այն վերանվանվեց «Ազգային անվտանգության խորհուրդ»:

³ Կոորդինացիոն կարգավիճակ է տրվում նաև Բելառուսի Անվտանգության խորհրդին՝ այդ երկրի համապատասխան օրենսդրության համաձայն:

վտանգության խորհրդի կազմը» հռոժվածի 1-ին և 2-րդ կետերում սահմանված է. «Ազգային անվտանգության խորհրդի նիստերը ղեկավարում է Վրաստանի նախագահը: Ազգային անվտանգության խորհրդի մշտական անդամներն են՝ Վրաստանի վարչապետը, ԱԳՆ նախարարը, ՊՆ նախարարը, ՆԳՆ նախարարը, ֆինանսների նախարարը և նախագահի՝ Ազգային անվտանգության գծով խորհրդականը՝ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը»: Սույն հռոժվածի երրորդ կետի համաձայն՝ «Վրաստանի խորհրդարանի նախագահը ուղղակի մասնակցություն ունի Ազգային անվտանգության խորհրդի նիստերին»: Երկրի խորհրդարանի նախագահը, փաստորեն, չունի ԱԱԽ մշտական անդամի կարգավիճակ, այլ ներկայանում է որպես խորհրդի անդամ (գրեթե նույն կարգավիճակն ունի նաև Ուկրաինայի խորհրդարանի նախագահը): Ի դեպ, երկրի օրենսդրությունում գոյություն չունի «մշտական անդամների» և «ուղղակի մասնակիցների» կարգավիճակների տարբերակման որևէ հստակություն: Ի տարբերություն Վրաստանի, Ադրբեջանի ԱԽ օրենքում, որտեղ չկա մշտական և ոչ մշտական անդամների կարգավիճակի սահմանում, խորհրդարանի (Միլլի մեջլիս) ղեկավարը Ադրբեջանի նախագահից հետո առաջնորդում է խորհրդի անդամների ցուցակը (վերջինիս հաջորդում են երկրի վարչապետը և նախագահի աշխատակազմի ղեկավարը):

ԱԱԽ կազմին վերաբերող հարցերից մեկն էլ վերաբերում է խորհրդի անդամների նշանակման ու հեռացման կանոնակարգին: Վրաստանի Սահմանադրության 4-րդ «Վրաստանի նախագահը» գլխի 73-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, «Վրաստանի նախագահն է նշանակում Ազգային անվտանգության խորհրդի անդամներին, նախագահում նրա նիստերը»: Ինչ վերաբերում է Ազգային անվտանգության խորհրդի մասին՝ օրգանական օրենքին, ապա այստեղ ձևակերպված չէ որևէ սահմանում այդ վերաբերյալ, բացի խորհրդի քարտուղարից, որին ազատում ու նշանակում է երկրի նախագահը: Ի դեպ, թեև ԱԱԽ քարտուղարն ունի մշտական անդամի կարգավիճակ և միաժամանակ ստանձնում է երկրի նախագահի՝ անվտանգության գծով խորհրդականի պաշտոնը, սակայն նրա իրավասությունները զգալիորեն կենտրոնացած են խորհրդի կազմակերպչական-կոորդինացիոն գործառույթների շրջանակներում, և թերևս չունի լուրջ ազդեցություն խորհրդի որոշումների վրա¹:

Վրաստանի ԱԱԽ ներկայիս կազմը. քաղաքական ասպեկտ

«Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի ԱԱԽ կազմը, ինստիտուտի որոշումների կայացման համակարգը ժամանակ առ ժամանակ ենթարկվել են փոփոխությունների, որոնք հիմնականում պայմանավորված էին կառավարական հաճախակի դարձած վերադասավորումներով ու ներհիշխանական/քաղաքական զարգացումներով: Անհամեմատ է տարբերությունը նոյեմբերյան իշխանափոխության առաջին տարիներին ձևավորված և գործող ԱԱԽ-ների միջև՝ կապված որոշումների կայացման մեխանիզմում խորհրդի պատասխանատուների ազդեցության բաշխվածության, միջանձնային հարաբերությունների հարցերի հետ: Իշխանափոխությունից հետո երկրի վերնախավում գոյացած իշխանական երկու ճամբարների միջև հավասարակշռությունը՝ ի դեմս Սահակաշվիլու և Ժվանիա-Բուրջանաձե գույզի, արտացոլվում էր նաև Անվտանգության խորհրդում: Իրադրությունը կտրուկ փոխակերպվեց հատկապես Ժվանիայի մահվանից հետո, երբ վերնախավում սկսեց հիմնականում իշխել նախագահական թևը, դրան հակառակ թուլացավ Բուրջանաձեի իշխանությունը: Արդյունքում՝ ԱԱԽ որոշումների կայացման համակարգում զգալի էր Սահակաշվիլու թիմի ազդեցությունը՝ ի դեմս ՊՆ նախկին ղեկավար Ի.Օկրուաշվիլու, ՆԳ նախարար Վ.Մերաբիշվիլու, արտգործնախարար Գ.Բեժուաշվիլու, ՊՆ նախկին նախարար Գ.Բարամիձեի:

Պաշտպանության նախարարի պաշտոնից Օկրուաշվիլու ազատումից հետո, որը Սահակաշվիլու պոտենցիալ մրցակիցն էր այդ թվում և ԱԱԽ-ում, էլ ավելի ընդլայնվեցին նախագահական թևի քաղաքական *մենիշխան* լիազորություններն այդ ինստիտուտում: Երկ-

¹ Ի տարբերություն Վրաստանի, մասնավորապես ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարը ոչ միայն ունի խորհրդի մշտական անդամի կարգավիճակ, այլև նրա ձայնը որոշիչ նշանակություն ունի ինստիտուտի որոշումների ընդունման գործում: Ավելին, սույն օրենքի 5-րդ կետի համաձայն, «Անվտանգության խորհրդի մշտական և ոչ մշտական անդամները նշանակվում ու հեռացվում են ՌԴ նախագահի կողմից՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի ներկայացման հիման վրա»:

րի ԱԱԽ ներկայիս կազմում կառավարության ղեկավար Զ.Նոդախյանի իշխանությունում չունի լուրջ քաղաքական ազդեցություն ու հեղինակություն, ՆԳՆ և ԱԳՆ ղեկավարները՝ Վ.Մերաբիշվիլին ու Գ.Բեժուաշվիլին չունեն իշխանական խնդիրներ նախագահի հետ, իսկ ՊՆ ղեկավարի պաշտոնում նորանշանակ, երիտասարդ (29 տարեկան է) Դավիթ Կեզերաշվիլին ավելի շուտ «տեխնիկական» նախարար է: Ֆինանսների նախարարության նորանշանակ ղեկավար, նույնպես երիտասարդ (ծնված 1975թ.) Նիկա Գիլաուրին, որը 2004-2007թթ. երկրի Էներգետիկայի նախարարն էր, քաղաքական դաշտում համեմատաբար չեզոք կերպար է: Օրենսդրության համաձայն՝ ԱԱԽ-ում երկրի խորհրդարանի նախագահը՝ հանձին Բուրջանաձեի, չունի մշտական անդամի կարգավիճակ, իսկ քաղաքական առումով բավական թույլ են նրա դիրքերը այդ թվում և խորհրդի ներսում¹:

Ինչ վերաբերում է ԱԱԽ քարտուղարին, ապա վերջին երկու տարիներին այդ պաշտոնը զբաղեցնում է Կոնստանտին Քեմուլարին: Վերջինս մասնագիտությամբ իրավագետ է, բուհական կրթության մի մասը ստացել է Մոսկվայում, «վարդերի հեղափոխությունից» հետո՝ 2004թ. նշանակվել է ՌԴ-ում Վրաստանի դեսպան, իսկ մինչև ԱԱԽ քարտուղարի պաշտոնը ստանձնելը՝ երկրի փոխվարչապետն էր (ռուս-վրացական հարաբերությունների գծով): 63-ամյա Կ.Քեմուլարին, որը չի դասվում «վարդերի հեղափոխության» առաջատարների կամ ուղղակի մասնակիցների շարքին, ըստ ամենայնի նշանակվել է ԱԱԽ քարտուղարի պաշտոնում ռուս-վրացական հարաբերությունների կորորդինացման նպատակով (հաշվի առնելով ոլորտում նրա դիվանագիտական փորձառությունն ու անձնական կապերը) և, թերևս, չունի քաղաքական ազդեցության լուրջ լծակներ խորհրդի որոշումների կայացման համակարգում:

Անդրադառնալով Վրաստանի ԱԱԽ անդամների իրավաքաղաքական փոխդասավորվածության հարցերին՝ առանձնացնենք ևս մեկ կարևոր կետ, որը չի հանդիպում սույն հոդվածում նշված գրեթե բոլոր երկրների ԱԽ իրավական դաշտում²: Վրաստանի ԱԱԽ գործող օրենքի համաձայն՝ «Վրաստանի ԱԱԽ նիստերին մասնակցելու նպատակով, Վրաստանի նախագահի որոշմամբ, կարող են հրավիրվել այլ անձինք ևս» (Երրորդ հոդված, 4-րդ կետ): Ընդ որում՝ օրենքում որևէ հստակ ձևակերպում չկա Վրաստանի ԱԱԽ նիստին հրավիրված տվյալ պաշտոնյայի քաղաքացիության վերաբերյալ: Խորհրդանշական է, որ «վարդերի հեղափոխությունից» հետո երկրի ԱԱԽ նիստերին, որտեղ սեղանին են դրվել առավել մեծ կարևորություն ունեցող հարցեր, Մահակաշվիլու հրավերով մասնակցություն են ունեցել հիմնականում ԱՄՆ համապատասխան ներկայացուցիչները (օրինակ, 2004թ. մայիսին աջարական ճգնաժամի ժամանակ գումարված Վրաստանի ԱԱԽ նիստին մասնակցում էր նաև երկրում ԱՄՆ դեսպանը):

Եզրակացություն

Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի ներկայիս կազմը, խորհրդի ներսում որոշումների կայացման հարցում նախագահական թևի *մենիշխանությունը* թույլ են տալիս ենթադրել, որ տեղի կունենան.

- հապճեպ կամ ոչ այնքան շրջահայաց որոշումների կայացում,
- երկրի ներքին ու արտաքին քաղաքական կուրսում ոչ շրջահայաց քայլերի ձեռնարկման հավանականության մեծացում,
- արտաքին ու ներքին (ռուս-վրացական սպեկտր, հակամարտություններ) կուրսի խստացում,
- հակամարտության օջախներում ռազմական բախումների հավանականության մեծացում:

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

¹ Բուրջանաձեի լուրջ խնդիրներ ունի նաև խորհրդարանական մեծամասնության հետ, որը ներկայացնում է իշխանական «Ազգային շարժում» կուսակցությունը:

² Բացառություն է կազմում Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը, որի օրենքում սահմանվում է, որ «խորհրդի նիստերին իրենց տեսակետները հայտնելու նպատակով կարող են հրավիրվել այլ նախարարներ և անձինք»:

ИСПОЛЬЗОВАНИЕ ЧАСТНЫХ АРМИЙ В КОНФЛИКТАХ

Частные армии все более вовлекаются в конфликты по всему миру. Первоначально частные военные компании занимались обучением армий. Первой подобной фирмой считается британская *Watchguard International*, которую в 1967г. создал британский полковник Дэвид Стирлинг, организовавший в 1942г. легендарную САС (Специальную авиадесантную службу). В годы Холодной войны были сформированы такие британские и американские частные армии, как *Kilo Alpha Service*, *Control Risks Group*, *Defense Systems Limited*, *Saladin Security Ltd*, *Keenie Meenie Services*, *Vinnell*, *Pacific Architects & Engineers* и т.д.

Однако если первоначально эти компании в основном занимались тренировками местных армий, то с 90-ых годов они начали активно вовлекаться в различные конфликты именно как воинские формирования. Частные армии являются сейчас столь мощным бизнесом, что играть против них чрезвычайно трудно. По данным Питера Сингера из *Brookings Institution*, доходы частных армий, которые действуют в более чем 50 странах, ежегодно достигают \$120 млрд.

В данный момент одна из подобных организаций оказалась в центре скандала. В США разгорается скандал вокруг деятельности частной охранной фирмы *Blackwater* в Ираке, которая в действительности представляет собой настоящую армию, оснащенную по последнему слову военной техники, вдобавок обладающую тяжелым вооружением (например, боевые вертолеты).

Сотрудники компании *Blackwater* официально в основном заняты охраной американских дипломатов в пределах так называемой Зеленой зоны в Багдаде. 16 сентября они устроили стрельбу на улицах Багдада, в результате чего погибли 17 и были ранены более двадцати мирных жителей. Представители *Blackwater* заявляют о том, что их сотрудники невиновны и стрельба была начата после того, как по пути следования кортежа, в котором находились дипломаты, погромел взрыв. В то же время иракские власти обвиняют американцев в неспровоцированной стрельбе.

Аналогично, 9 октября контрактники австралийской охранной фирмы *Unity Resources Group* застрелили двух иракских армянков, после чего компания принесла свои извинения. Так как инцидент был не таким масштабным, то особого шума он не вызвал. Кроме того, Госдепартамент незамедлительно вывозит наемников, участвовавших в подобных случаях, чтобы освободить их от судебного преследования.

По данным Конгресса США, с июня 2005г. только наемники участвовали в 195 инцидентах с применением оружия, причем в 163 случаях как раз они первыми открывали огонь.

Blackwater была основана в 1997г. отставными американскими военными. Компания начала свой подъем, когда стала получать федеральные заказы. Если в 2001г. *Blackwater* получила из федерального бюджета \$736 тыс, то уже в 2005г. сумма превысила \$25 млн. А в 2006г. контракты составили почти \$600 млн. Доходы *Blackwater* за время военной кампании в Ираке (по данным на конец 2006г.) превысили миллиард долларов.

Каждый день работы одного наемника из *Blackwater* обходится американскому бюджету в среднем в \$1222. При этом военнослужащий американской армии, выполняющий аналогичную работу (в звании сержанта), получает \$140-190 в день (в зависимости от выслуги лет и т.д.) Таким образом, один боевик из *Blackwater* обходится американскому бюджету в 6-9 раз дороже.

Количество наемников из частных охранных агентств в Ираке точно определить трудно, так как их деятельность официально не отслеживается. Кроме того, все сотрудники компаний не берутся в штат, а числятся независимыми подрядчиками. В Ираке действует порядка 60 частных охранных фирм (не только американских). Белый дом аналогично использует наемников и в Афганистане.

По данным *Brooking Institution*, США держат в Ираке порядка 180 тыс. частных контрактников (при 160-тысячном контингенте), являющихся официально гражданскими лицами. Из них 118 тыс. являются гражданами Ирака, 21 тыс. – американцы, а 43 тыс. – граждане третьих стран. Это без учета британских, австралийских и других охранных фирм, которые также активно задействованы в Ираке. Таким образом, в Ираке наемники количественно превышает коалиционную армию.

США тратят на частные агентства огромные суммы. Так, по данным конгрессмена Генри Воксмана, за время оккупации Ирака Вашингтон потратил на сервисы по безопасности, предоставляемые частными фирмами, порядка \$4 млрд. *Blackwater* не является самым крупным подрядчиком среди американских компаний. Крупнейшей фирмой, которая работает с американскими военными в регионе, является *Kellogg, Brown & Root* (KBR), которая имеет в Ираке и Кувейте порядка 50 тыс. работников. (Согласно некоторым источникам, *Blackwater* является субконтрактором *KBR*). По данным независимых СМИ, услуги KBR Пентагону с 2002г. (включая невоенные услуги) составили почти \$12 млрд.

Ценность частных охранных компаний для Вашингтона, который готов платить огромные суммы за их услуги, понятна. Охранники, официально не являющиеся представителями американской администрации, могут действовать по своему усмотрению, превышая все возможные полномочия. Администрация Буша при этом формально не несет ответственности за инциденты, инициированные наемниками.

Кроме того, судя по попадающей в прессу информации, частные агентства заняты в Ираке не только сугубо охранной деятельностью, но часто вовлекаются в войсковые операции, делая для американских военных черную работу, куда Пентагон не решается влезать во избежание лишних потерь. Речь идет об операциях со стороны наемников вплоть до использования военной техники, боевых вертолетов и т.д.

В то же время наемники не подпадают под какую-либо статистику, их потери оцениваются лишь приблизительно, так как не вносятся в официальные сводки из Ирака. Соответственно, Белому дому не приходится рапортовать о гибели американских военнослужащих. По имеющейся информации, только потери *Blackwater* в Ираке составляют свыше 1000 человек убитыми и 15 тыс. ранеными. Однако эти цифры могут быть как существенно завышенными, так и заниженными, так как никакой официальной правдивой информации по этому вопросу не существует. Однако, по данным телекомпании *PBS*, потери частных компаний с 2003г., вероятнее всего, превышают официально озвученные потери американской армии в Ираке.

Стоит также отметить, что на сегодняшний день воинскими подразделениями обзаводятся также и крупные корпорации. Так, летом текущего года российская Госдума в третьем окончательном чтении одобрила изменения в законы «О поставках продукции для федеральных государственных нужд» и «Об оружии». Благодаря этому закону компании «Газпром» и «Транснефть» получают законное право на формирование своих корпоративных армий.

Таким образом, привлечение частных армий, а также возникновение армий у крупных корпораций кардинально меняет облик современной войны. В этом плане и в карабахском противостоянии этот фактор должен учитываться в связи с тем, что у Азербайджана есть опыт широкомасштабного использования наемников против армянских сил во время войны. Учитывая предложение на мировом рынке наемных солдат, не исключено, что в будущем они могут быть задействованы против НКР и Армении.

Самвел Мартиросян